№ 4 ՈՒՐԲԱԹ 9 ՅՈՒՆՎԱՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ 9 ՅՈՒՆՎԱՐԻ № 4

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատունը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ

(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Յունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

«Մշակը» ունի սեփական թղթակիցներ արևելեան և կովկասեան ռազմաճակատների վրա—Վարշավա և մօտակայ շրջաններում, Կարս, Սարիղամիշ, Բայազիդ և այլն։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1915 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1915 թ.) միանուագ կամ մաս-մաս վճարած կլինեն 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան 1915 թ. ընթացքում ՁՐԻԱԲԱՐ հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը.

1) „Տանջվածը", մեծ վէպ ՇԱՀՐԻԱՐԻ, հայկական յեղափոխական կեանքից։
2) „Հայկական հարցը", լուսաբանված դոկումէնտներով, մի ստուար հատոր, պատկերներով։

Ծանօթ.—Արտասահմանեան բաժանորդները պրէմիաները ստանալու համար պիտի ուղարկեն ճանապարհածախսը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆԻՍԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զրկվելով իրանց տնից ու տեղից, ունեցած կարողութիւնից և հարստութիւնից և միմիայն իրանց կեանքը ազատելու նպատակով, մերկ ու քաղցած՝ հայ ժողովրդից շատերը գաղթել են Ռուսաստան, Պարսկաստանից և Թիւրքիայից. իր հետ բերած չունեն նոյն իսկ ամենաանհրաժեշտ իրերը։

Հայկական Կենտ. Կոմիտ. և Բարեգ. Ընկ., որ հոգ են տանում փախստականներին, նկատի ունենալով մեծ կարիքը, խնդրում են բարերար անձանց նուիրելու այս ցուրտ ձմրան, անհրաժեշտ իրեր. նամանաւանդ վերմակ, դօշակ, վառարան, հագուստ, ոտնաման և այլն։

Նուիրաբերութիւնները խնդրվում է ուղարկել Тифлисъ, Абасъ-Абадская 7. Арм. Благотворительному Обществу.
(ա.օ.) առ. 3. 3—3

Հայ Նպաստամատոյց Ընկերութիւնը,

որոշած լինելով իր գործունէութիւնը այժմ ԲԱՑԱՌԱՊԷՍ ՆՈՒԻՐԵԼ ՓԱԽՍՏԱԿԱՆ-ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ, յայտնում է ի գիտութիւն հասարակութեան և բարեգործ անձանց, որ շնորհակալութեամբ ընդունում է նուէրներ դրամով, հագուստեղէնով, վերմակներով, բարձերով, կօշիկներով և այլն յօգուտ փախստականների։

Նուիրաբերութիւնները ուղղել՝ դրամները Ընկ. գանձապահ տ. Ե. Սպենդիարեանին (Евангуловская, № 8) կամ «Մշակ», «Тиф. Листокъ» և «Кавказ. Слово» օրաթերթերի խմբագրութիւնների անունով՝ Ընկերութեանը յանձնելու համար, իսկ իրերը ուղղել Ընկ. գործավար Ս. Եսայեանին «Մշակի» խմբ. գրասենեակը (Соломоновская, 21).
(6,9,12) 3—2

Պատերազմից վնասվածներին օգնող Թիֆլիսի Քաղաքային Կենտրոնական Կոմիտէտին կից կազմված

„ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ"

խնդրում է այն անձանց, որոնք կարող են օրական տալ ճաշ փախստականներին կամ կերակրել նրանց իրանց տանը, հաղորդել այդ մասին յանձնաժողովի քարտուղար Մ. Շահպարոնեանցին (Сололакская, 12, տ. Մարգանովի)։ Միևնոյն յանձնաժողովը խնդրում է այն տանտէրերին, որոնք ազատ կացարաններ և բնակարաններ ունեն Վօկզալի կամ Հավլաբարի շրջանում, հաղորդել նոյնպէս բնակարանների քանակը և պայմանները նոյն հասցէով։
(6, 9, 12) առ. 3—2

Կիրակի, յունվարի 11-ին, ցերեկվայ ժամը 12-ին
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
նշանակված է

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

անդամների ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ շարունակութիւնը.

Օրակարգի խնդիրներն են.
1) Ընտրութիւն Ընկերութեան նախագահի։
2) Ընտրութիւն Վերստուգիչ Յանձնաժողովի անդամների։
3) Զեկուցումն վարչութեան ընթացիկ հարցերի մասին։

Ընկերութեանս անդամակցել ցանկացողները թող դիմեն գործավար Ս. Եսայեանին։
առ. (ա. օ.) 12. 3—1

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Այսօր, ուրբաթ, հերթական jour fixe-ը չի կայանալու, որովհետև դռնփակ նիստ ունի Սալօնի Յանձնաժողովը, որի անդամները հրաւիրվում են շնորհ բերելու երեկ. 8 ժամին։

Ի դէպս յայտարարվում է ի գիտութիւն Սալօնի jour fixe-երին յաճախողներին, որ նրանք այսուհետև իւրաքանչիւր անգամ պէտք է մտնելիս ներկայացնեն իրանց հրաւիրագիրը, որ սեզօնի սկզբին ստացել են։ Jour fixe-երին կարող են ներկայ լինել արուեստագէտները, գեղագէտները, գրականագէտները, լրագրողները իրանց ընտանիքներով, որոնք սեզօնի սկզբին ստացել են հրաւիրագիր, և «ՏԱՐԱԶԻ» բաժանորդները։ Կողմնակի մարդկանց համար բացէ ի բաց փակ է Սալօնի մուտքը։ առ. 13. 1—1

Կովկասեան Հայ Որբերի Ընկերութիւնը,

որի նպատակն է օգնել հայ փախստականներին նիւթապէս և բարոյապէս, հրաւիրում է բոլոր հայ օրիորդներին աջակցել Ընկերութեան ով ինչով կարող է—փողով, շորերով, գործ գտնելով փախստականներին, կամ իրանց բարի խորհուրդներով։ Նուէրներ ընդունվում են Ընկերութեան գրասենեակում՝ Паскевича 16, кв. Арзуманяна)
առ. (կ.) 14. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, յունվարի 10-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏ. ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ

Թագաւոր, օրէնք եւ ազատութիւն

Պիէս 4 գործող. Լ. Անդրէևի, թարգմ. Ս. Թառայեանի։

Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են մուտքի համար — տղամարդիկ 50-ական կոպէկ, կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։
առ. 11. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մօսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի։ Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով, առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլօլակ՝ Ռտիշչևսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(հ. ու. կ.) առ. 875. 70—46

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Պէտք է հաճութեամբ արձանագրենք Պետրոգրադի „Нов. Время" թերթի համակրական յօդուածը ի նպաստ հայ փախստականների և նրա կոչը, ուղղված ռուս ժողովրդին՝ նուիրաբերութիւններ անել յօգուտ այդ փախստականների։

Հաճութեամբ պէտք է արձանագրենք, որովհետև ռուս այդ մեծ և ազդեցիկ թերթի վերաբերմունքը դէպի հայերն առաջ բարեացակամ չէր։

Մարդասիրական զգացումները աւելի նշանակութիւն են ստանում, երբ նրանք արտայայտված են մանաւանդ հակառակորդների կողմից։ Սրտաշարժ է մանաւանդ, որ թերթը յայտարարում է հայերին եղբայրներ ի Քրիստոս, տանջվող՝ Ռուսաստանի շահերի համար։

Ռուս ազդեցիկ թերթը շատ լաւ ըմբռնել է, որ ռուս մեծ ազգի վրա բարոյական պարտք կայ օգնել թշուառ հայ ժողովրդին, որովհետև եթէ հայ ժողովուրդը երախտապարտ է Ռուսաստանին, որ սա իր ձեռքն է առել նրա ազատագրութիւնը թիւրքական լծից, Ռուսաստանն էլ գիտէ, որ հայերը այսօր առաւելապէս տառապում են և վնասվում իրանց առ Ռուսաստանն արտայայտած անկեղծ և բուռն համակրութիւն և եռանդի համար։

Այդ տեսակէտով՝ որքան և ազնիւ է «Нов. Вр.» թերթի վերաբերմունքը դէպի թշուառ հայ փախստականները, նոյնչափ անտեղի և անվայել է վրաց «Կլդէ» թերթի յայտնած կարծիքը, թէ ռուսաց կառավարութիւնը անարդարութիւն կանէ, եթէ պետական նպաստ տայ հայ փախստականներին, որոնց օգնելու գործը վերաբերում է Կովկասի հայ միլիոնատէրերին։

Մենք բնաւ չենք գրուատում հայ հարուստներին. մենք միշտ պահանջել և պահանջում ենք, որ հայ հարուստները կատարեն իրանց ազգային և մարդասիրական պարտականութիւնը, բայց միևնոյն ժամանակ չենք կարող չը շեշտել և այն հանգամանքը, որ հայ ժողովրդի գլխին պայթած աղէտն այնքան մեծ է, այնքան սոսկալի, որ առանց պետական օգնութեան անկարելի է իրական օգնութիւն հասցնել թշուառ հայ փախստականներին։

Եւ մենք համոզված ենք, որ մեր բարեխնամ կառավարութիւնը կը կատարէ իր պարտքը և կամոքէ թշուառների ցաւերն ու վշտերը։

Համոզված ենք նոյնպէս, որ վրաց ժողովրդի առողջամիտ և ուղղամիտ մասը դժգոհութեամբ պէտք է ընդունէ «Կլդէ» թերթի կարծիքը։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

«ՄՇԱԿԻ» ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Սեփական թղթակցից)

Ալէքսանդրօպօլ, 4 յունվարի

Օլթիից և Արդահանից ամեն օր շարունակ Կարս են գալիս գերի ասկեարներ։ Յունվարի 3-ին առաջին անգամ Արդահանից Ախալքալաքով ոտքով եկան 300 գերի։ Սարիղամիշից Թիֆլիս ուղարկվեցին 16 թիւրք գերի օֆիցերներ. նրանց մէջ կայ մի հայ բժիշկ։ Օֆիցերներից մի քանիսը կրում էին ճղճղված զգեստներ և կօշիկներ։

Ատրպետ

Ալէքսանդրօպօլ, 5 յունվարի

Սարիղամիշից Թիֆլիս ճանապարհվեցին Ջիվինից բերված 390 գերիներ։ Դրանցից 48-ը հայեր են՝ թնդանօթաձիգներ և սապեօրներ։ Իսկ Կարսից Թիֆլիս ուղարկվեցին 102 գերի ասկեարներ Օլթիի շրջանից։

Ատրպետ

Աստրախան, 5 յունվարի

Այսօր Աստրախանի հայ կոմիտէտը երկու վագօն տաք շոր և ձկնեղէն է ուղարկում Թիֆլիս՝ Երևան փախստականների և զօրականների համար։ Ընտրված է կոմիտէտի լիազօր պատգամաւոր Սարգիս ք. Ասլանեանը, որ այս օրերս մեկնում է յիշեալ իրերը տեղում բաժանելու։

Պետրոգրադ, 7 յունվարի

Այստեղի կոմիտէտը փոխադրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Էջմիածին, փախստական-գաղթականների օգնութեան համար 75,000 րուբլի։ Այս գումարից 25,000 ր. տուել է իշխան Ս. Աբամէլիք-Լազարեվը, 25,000 ր. եկեղեցական խորհուրդը և 25,000 ր. հանգանակված է։

Ս.

Պետրոգրադ, 7 յունվարի

Որոշված է այստեղ կազմակերպել յօգուտ փախստական գաղթականների ժողովարարութիւն մի օր «Օր փախստականների» (День бѣженцевъ) անունով։

Գ.

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

5 6 և 7 յունվարի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Կարաուրգանի մօտ ջարդված թիւրքաց զօրքին մենք շարունակում ենք հետապնդել։ Ենիքեօյի մօտ երկու օր տևող յամառ կռւում ջարդվեցին 32-րդ թիւրքական գումարտակի զօրամասերը, որոնք կրեցին խոշոր կորուստներ և փութանակի նահանջեցին, թողնելով մեր ձեռքում երկու գնդակացիր օֆիցէրների և ասկեարներ հետ։ Թիւրքերի կորուստները միայն սպանվածներով Սիբիրի կօզակ գնդերից մէկի հետ ընդհարվելու ժամանակ հասնում է մօտ 300 մարդու։ Մնացած զօրաճակատներում տեղի ունեցան աննշան ընդհարումներ։

Թիւրքաց զօրքերին հալածելը շարունակվում է։ Անդրճորոխեան երկրում հակառակորդին մենք ետ ենք մղում աջողութեամբ և յունվարի 5-ին մենք ձեռք ձգեցինք Գիտրէ-վէտի գիւղը և Սուլթան Սէլիմ լեռան դիրքերը պատճառելով թշնամուն զգալի կորուստներ։

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասի զօրաբանակի շտաբի կողմից.

Յունվարի 6-ին Ախալիկի, Լեավսօրի և Կեադանի շրջանում տեղի ունեցան մի շարք կռիւներ թիւրքերի յետապահների հետ, որոնց մնացորդները շտապով նահանջում են։ Մենք վերցրել ենք շատ գերիներ և թիւրքաց լագէրը։ Յունվարի 5-ին մենք վերագրաւեցինք Արդանուշը։ Յածանաւը, որ ուղարկվել էր ծովափը դիտելու, ջրասոյզ է արել Արխեվի մօտ թիւրքական 12 բեռնակիր նաւ։ Միւս մասերում առանձին փոփոխութիւններ չը կան։

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 յունվարի

ԴԷԼԻ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. «Դեկտ. 19-ին արաբական օման ցեղը յարձակում գործեց Մուսկատ քաղաքի վրա։ Թշնամին կորցրեց 3000 մարդուց 500-ին։ Ցեղապետ Իգաբին Սալէհը, ինչպէս հաղորդում են, վիրաւորվել է։ Անգլիացիք կորցրին մի կապիտան և 14 զինուոր վիրաւոր, 6 սիփահի սպանված։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 յունվարի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Օրպէսզի վարագուրէ թիւրք զօրքերի պարտութիւնը և նահանջը ռուսական զօրաճակատում, թիւրքաց գլխաւոր բանակը հրատարակել է հետևեալ հաղորդագրութիւնը. «Տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ կովկասեան զօրաճակատում, սակայն ռուս զօրքերը ստացան բաւականին օգնութիւն»։

Այդ հաղորդագրութիւնը հող է պատրաստում թիւրք զօրքերի նահանջի մասին տեղեկացնելու համար, որը դեռ չէ հրատարակվում, որպէսզի յուզմունք չը ստեղծվի թիւրք ազգաբնակութեան մէջ, որ առանց այն էլ դժգոհ է պատերազմից։

(Լրագիրներից)

◆ Ատրպատականի ցեղապետները հեռագրել են պարսից կառավարութեան, որ նրանք ձեռնպահ են մնում Ատրպատական մտած թիւրքերի դէմ ելնելուց։

◆ Թիւրքերը շտապով ամրացնում են Չաթալջան։

◆ Յունաստանը պատրաստվում է պատերազմ յայտարարել Թիւրքիային։

◆ «Բրէսլաուն» և մի ականանաւ Բոսֆօր են մտել զգալի վնասված։

◆ Ֆրանսիացի օդագնացների նետած ռումբերից Ադրիանուպօլսում մեծ վնասներ են եղել։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքերը, երկիւղ կրելով թէ մի գուցէ Աբդուլ-Համիդը նորից գահ բարձրանայ, հեռացնում են Կ. Պոլսից նրա ժամանակ ծառայութեան մտած օֆիցէրներին։ Կ. Պոլսի փողոցների պատերին կպցրին կոչեր երիտասարդ թիւրքերի և գերմանացիների դէմ։ Հին թիւրքերը խմբերով ձերբակալվում են։

◆ Էրզրումում, ինչպէս հաղորդում են լրագիրները, ապստամբութիւն է բռնկվել քաղցի պատճառով։ Բոլոր խանութները կողոպտված են և ջարդված։ 60 հոգու կախաղան են բարձրացրել։

◆ Ռումինական մահմեդականները միտինգներում բանաձևով ընդունել են, որ չէզոք երկիրների մահմեդականները պարտաւոր են անտես անել Թիւրքիայի կոչը՝ սրբազան պատերազմ յայտարարելու։

◆ Պաղեստինից եկածները պատմում են, որ թիւրքաց գլխաւոր ոյժերը կենտրոնացած են Երուսաղէմում։

◆ Կ. Պոլսի բնակիչներին առաջարկված է միշտ ջրի պաշար ունենալ, որպէսզի ֆրանսիացի և անգլիացի օդագնացների ռումբեր նետելու դէպքում հրդեհները կարելի լինի հանգցնել:

◆ Բ. Դուռը Զմիւռնիան վերակոչել է Իզմիր, Ադրիանուպոլիսը՝ Էդիրնէ, Եգիպտոսը՝ Միսրինա:

◆ Աթէնքից տեղեկացնում են «Н.В.»-ին, որ Էնվէր-փաշան կովկասեան զօրքում ղեկավարում էր Սարիղամիշի ճակատամարտը: Նա ստիպված է եղել մեկնել, երբ թիւրք օֆիցէրների մէջ ապստամբութիւն է բռնկվել: Էնվէրը, Կ. Պոլիս գալով, հրամայեց հրացանի բռնել ապստամբ օֆիցէրներից 17-ին:

◆ Երիտասարդ թիւրքերը գործակալներ են ուղարկել Պարիզ՝ Սաբահ-Էդդինին սպանելու յանձնարարութեամբ:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

◆ «Рѣчь»-ը, պատասխանելով «День» լրագրում տպված Լէօյի յօդուածին, որ կշտամբում է Միլիւկովին Լոբանով-Ռոստովսկիի հայեացքներն ունենալու մէջ, նկատում է, թէ Լէօն մոռանում է գլխաւորը, որ ռուսական քաղաքականութիւնը և նախկին հայկական ձգտումները հետամուտ էին Հայաստանն ազատելու Թիւրքիայից, այլ ոչ թէ Ռուսաստանից:

◆ «К. Сл.»-ին հեռագրում են Իգդիրից. «Վանից փախած մի զօրական պատմում է, որ Վանում կազմակերպված է ժողովրդական միլիցիա առանց ազգի խտրութեան: Պատգամաւորներ Վռամեանի և Փափազեանի ձերբակալութիւնը հերքվում է»:

◆ «Մշակի» անցեալ տարվայ № 289-ում լոյս ընծայեցինք Պարիզից գրված մի նամակ, որի մէջ յիշատակված էր, թէ այնտեղի հայ գաղութը հեռագիր է ուղարկել Կովկասի փոխարքային:

Այժմ Պարիզից մեզ հաղորդում են, որ ի պատասխան յիշեալ հեռագրի՝ փոխարքայից ստացվել է հետևեալ հեռագիրը յանուն Պարիզի հայ գաղութի հովիւ Վռամշապուհ ք. Քիպարեանի.

«Խնդրում եմ ձեր գերապատուութիւնից, որ հաճի յայտնել իմ անկեղծ շնորհակալութիւններս Պարիզի հայ գաղութին: Գեներալ-ադիւտանտ կոմս Վօրոնցով-Դաշկով»:

◆ Թիւրքիան պատժիչ զօրամաս է ուղարկում Հայաստան: Այդ մասին թիւրքերը բացէ ի բաց յայտնում են հայերին:

«НОВ. ВРЕМЯ»-Ի ԿՈՉԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Օգնեցէք հայ փախստականներին

Թիւրքական զօրաճակատում ռազմական գործողութիւնները սկսելու հետ, մեր առաջապահ գնդերը արագութեամբ անցան սահմանը և, իրանց ճանապարհին ջարդելով թշնամու ոյժերը, յաղթական կերպով գրաւեցին Էրզրումի մերձակայ շրջանը, որ բնակեցված է առաւելապէս հայերով:

Հայերի ուրախութիւնը և ցնծութիւնը—որ տասնեակ տարիներ ապրել են մի ընդհանուր երազով՝ ձուլվել Մեծ Ռուսաստանի պաշտպանութեան տակ խաղաղ և կուլտուրական գոյութեան պայմաններ ձեռք բերած իրանց եղբայրների հետ—անկարելի էր նկարագրել:

Ռուսական իշխանութիւններին, օֆիցէրներին և զինուորներին հայ ազգաբնակութիւնը ընդունել է ոգևորված, համբուրել նրանց ձեռքերը, համոզված՝ որ նրանց միջոցով նա կը ստանայ կեանքի և ապահովութեան այն տարրական իրաւունքները, առանց որոնց նա կործանվում էր և այլասերվում էր թիւրքաց լծի տակ...

Բայց ազատութեան և բաղդաւորութեան ժամը չի հնչել տակաւին: Ռուս զօրքը, կատարելով իր պարտականութիւնը, առաջ բերեց մի քանի ցոյց—կռւում թշնամու հսկայական հրոսակախմբերի մէջ և քայլ առ քայլ սկսեց մօտենալ մեր սահմանին, իր ետևից քաշելով թշնամու այդ ոյժերը:

Այդ ձևով թիւրքաց ոյժերը քաշելով անգամ մեր սահմանների խորքը, այստեղ, Սարիղամիշի և Արդահանի մօտ ռուսական պանծալի զօրքը նրանց այնպիսի հարուած հասցրեց, որ չի լսված պատմութեան մէջ, ընդմիշտ խորտակեց թշնամու ռազմական ոյժը, ոչնչացնելով տասնեակ հազարաւոր թիւրքեր, գերի վարելով հսկայական խմբեր և փախուստի դարձնելով ջարդված երկու կորպուսի մնացորդները:

Ռուսական զէնքը փառաւորապէս հասաւ իր նպատակին, սակայն որպիսի գնով ստիպված եղաւ պատասխանել հայ ժողովուրդը դէպի ռուսները արտայայտած իր սիրոյ և հաւատարմութեան զգացմունքների համար,—միայն փախստականների խմբերով, աշխատելով ազատվել իրանց եղբայրների ճակատագրից, և խիտ, սարսափելի խմբերով շարժվում են նրանք դէպի ռուսական սահմանը տանող բոլոր ճանապարհներով ու կածաններով: Սրանից արդէն փոքր ի շատէ կարելի է երևակայել, թէ ինչ հրդեհներ են ստեղծվել թիւրքերի ձեռքով:

Հայերը՝ անտուն, սոված, ամեն ինչ կորցրած և իրանց սեփական կեանքը փրկելով՝ ձգտում են խաղաղութեան և բաղդաւորութեան աւետաց երկիր, մեծ քրիստոնեայ Ռուսաստանի սահմանները, մասսաներով լցվում են մեր սահմանները՝ օգնութիւն ակնկալելով: Նրանց մեծ մասը մեռնում է ճանապարհին, մանաւանդ երեխաները, որոնք չեն կարողանում տանել ցուրտն ու քաղցը և մեռնում են իրանց մօր գրկին:

Ծանր և իր էութեամբ սարսափելի խնդիրը—ռուսական սահմանները ողջ հասած հայերի օգնութեան խնդիրը—բաժին է ընկնում նրանց, որոնք չեն կարող չը կարեկցել այդ դժբաղդներին:

Ողջ կովկասահայութիւնը, մեծ ընդարձակ Ռուսաստանի բոլոր վայրերի հայերը արձագանք են տալիս փախստականներին եղբայրական զգացմունքներով և օգնութիւն են կազմակերպում նրանց համար. տեղական կառավարութիւնը նրանց տեղաւորելու համար շրջաններ է յատկացնում, սակայն կարիքը չափազանց մեծ է, և հայերը իրանց սեփական ոյժերով չեն կարող ծածկել:

Մեծ փորձութիւնների ժամին, որ բաժին է ընկել մահվան սարսափով լի հայրենիքից փախածներին, նրանք, ովքեր ամեն ինչ են տալիս նրանց, ռուս հասարակութեան են դիմում օգնութեան համար, յոյս ունենալով որ ռուս ժողովրդի մեծ սիրտը, որ միշտ արձագանք է տալիս իր անբաղդ-եղբայր-քրիստոնեաների կարիքներին, այս անգամ էլ կը խօսի, տալով մի նոր ապացոյց ողջ աշխարհին, որ Ռուսաստանի հզօրութիւնը ոչ թէ միայն իր ռազմական անխորտակելի ոյժի մէջ է, այլև բարոյական սկզբունքների, քրիստոնէական գաղափարի, եղբայրական օգնութեան մէջ:

Օգնեցէք, ռուս մարդիկ, մեր ընդհանուր հաւատի համար կործանվող խեղճ հայերին:

Նուիրաբերութիւնները ընդունվում են «Новое Время»-ի գրասենեակում (Невскій № 40):

ԵԳԻՊՏՈՍԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

Անգլիական մամուլը, ինչպէս և պէտք էր սպասել, մեծ ուշադրութիւն է դարձնում բրիտանական հովանաւորութեան վրա՝ Եգիպտոսի նկատմամբ և վերջինիս յետագայ վիճակի վրա: Այդ առիթով գրված մի շարք յօդուածներից ուշադրութեան արժանի և հետաքրքրական է մի յօդուած, որ տպված է «Թայմսում», մի օրգանում, որը, անկասկած, լաւատեղեակ է անգլիական արտաքին գործերի մինիստրութեան ծրագիրներին և մտադրութիւններին:

Ահա այդ յօդուածը.

«Թիւրքաց՝ Եգիպտոսի վրա ունեցած սիւզերէնիտէտի վերացումը և այնտեղ բրիտանական հովանաւորութեան հրատարակումը վարչական զուտ գործնական միջոց է, թելադրված Թիւրքիայի միջամտութիւնից պատերազմին: Նա բոլորովին հաւասարազօր չէ աննեքսիային, ինչպէս սխալ ենթադրում է «Manchester Guardian» և միւս թերթերը, և շատ ապացոյցներ կան այդպիսի աննեքսիայի դէմ: Դեկլարացիան, ըստ երևոյթին, Եգիպտոսին չի ազատում տարեկան 650,000 ստերլինգ տուրքից, որ տրվում է Թիւրքիային: Այդ փողերը անմիջապէս չէր ստանում Թիւրքիան: Նրանք գնում էին Լոնդոն և վճարում էին թիւրքական երկու փոխառութիւն, ապահովելով դրանց իւրաքանչիւր տարի որոշ վճարներ մուծելով: Այսուհետև պրոտեկտորատի դեկլարացիան չի խօսում ուղղակի Սուդանի մասին, ուր թիւրքաց սուլթանի սիւզերէնիտէտը չէր վերականգնված Սուդանի գաւառները անգլիական զօրքերի կողմից իր նուաճելուց յետոյ: Գէորգ թագաւորը օգտվում էր սուվէրէնի իրաւունքով Սուդանում խեդիվի հետ միասին, և այս փաստը ունի և պէտք է ունենայ մեծ նշանակութիւն բրիտանական ապագայ յարաբերութեան համար, որ կունենայ Եգիպտոսի հետ:

«Պրոտեկտորատը կանոնաւորում է աննորմալ և դժուարին դրութիւն: Թիւրքական սուվերէնիտէտը էր էապէս մի ստուեր: Անցած դարի առաջին 10-ամեակում նա գրեթէ ոչնչացվեց և վերականգնվեց միայն մեծ պետութիւնների միջամտութեամբ: Եգիպտական առաւել խոհեմ մարդիկ սկզբում բացասաբար էին վերաբերվում նրան... Միայն վերջին օրերը եգիպտական «ազգայնականները» Գերմանիայի ազդեցութեան տակ սկսեցին ձգտել Ստամբոլի հետ աւելի սերտ յարաբերութիւններ հաստատելու: Գործնականապէս Թիւրքիան ոչ մի իշխանութիւն չունէր Եգիպտոսի վրա: Երկիրը կառավարվում էր եգիպտական մինիստրներով, որոնց մօտ կային անգլիական խորհրդատուներ որոշ իրաւունքներով: Երբ Թիւրքիան վճռեց կռւի դուրս գալ Անգլիայի և նրա դաշնակիցների դէմ, պարզ եղաւ, որ անգլիական՝ Եգիպտոսի օկուպացիայի բնոյթի մէջ որոշ փոփոխութիւններ պէտք է կատարվեն: Կառավարութիւնը,—մենք կարծում ենք,—խելացի է վարվել, որ այդ փոփոխութիւնները սահմանափակել է առաւել նեղ շրջաններով: Դադարեցնելով թիւրքաց սուվերէնիտէտը և հրատարակելով բրիտանական պրոտեկտորատ, կառավարութիւնը դռները բաց է թողել յետագայ փոփոխութիւնների համար, եթէ նրանք անհրաժեշտ համարվեն:

«Որ աննեկսիա խօսքը չը պէտք է փոխվի Եգիպտոսի վերաբերմամբ, պարզ է կառավարութեան յետագայ հաղորդագրութիւններից: Խեդիվ Աբբաս-Հիլմին ձեւականապէս գահընկէց է արված, և նրա տեղ եգիպտական գահ է բարձրացված պրինց Հիւսէյինը: Նոր կառավարիչը ստացել է Եգիպտոսի սուլթան տիտղոսը մասամբ նրա համար, որ խեդիվ կոչումը տալիս էին թիւրքական ֆէրմանները: Նրա ընտրութիւնը, թիւրքաց՝ գահաժառանգութեան մասին ունեցած օրէնքի համաձայն գահը անցնում է ցեղի հասակաւոր տղամարդուն: Այդ օրէնքը իր ազդեցութիւնը դադարեցրել է Եգիպտոսում 1866 թւից: Պրինց Հիւսէյինը ամբողջ ընտանիքի մէջ աւելի արժանաւորն է խեդիվի տեղը բռնելու: Նոր սուլթանի ընտրութիւնը և խելացի է և ժողովրդական: Պրինց Հիւսէյինը խելօք և փորձված մարդ է, նա օգտվում է Եգիպտոսի ժողովրդի խոր յարգանքով»:

—

«Թայմսի» նոյն համարում մենք կարդում ենք մի շարք տեղեկութիւններ եգիպտական նոր սուլթան Հիւսէյինի մասին: Պրինց Հիւսէյինը աւագն է Մահամէդ-Ալիի ցեղի մէջ. նա երկրորդ և սիրելի որդին է խեդիվ Իզմայիլի, որը պետութիւնների պահանջով գահընկէց արվեց 1853 թւին: Պրինց Հիւսէյինը ծնվել է 1879 թ., նախնական կրթութիւնը ստացել է Եգիպտոսում, իսկ այնուհետև ուղարկվել է Պարիզ, ուր հիւր է լինում Նապոլէոն III-ի մօտ: 1869 թ. նա վերադառնում է Եգիպտոս, բայց նորից մեկնում է Եւրոպա միսսիայի հետ Վիկտոր Էմմանուէլի մօտ Ֆլորենցիա, ուր և մնացել է մինչև Պարիզի պաշարումը. վերադառնալով Եգիպտոս՝ նա բռնում է Վերին և Ներքին Եգիպտոսի ընդհանուր վերատեսչի պաշտօնը, որ 1872 թ. փոխարինվում է վակուֆների մինիստրութեան պորտֆէյլի: 1873 և 1876 թ. պրինց Հիւսէյինը աշխատում էր գրեթէ բոլոր մինիստրութիւններում, [illegible] ֆինանսների մինիստրութեան մէջ. ամեն մի վարչութեան մէջ նա աչքի է ընկել և բարձրացել:

Իզմայիլի գահընկէցութիւնից յետոյ Հիւսէյինը հօր հետ միասին հեռանում է Եգիպտոսից և երեք տարի ապրում Նէապոլում: Արաբի-փաշայի շարժման սկզբում նա թոյլտուութիւն է ստանում հայրենիք վերադառնալու: Հիւսէյինը միշտ հետաքրքրվում էր գիւղատնտեսութեամբ, ֆելլահների դրութեամբ և կոօպերատիվ շարժումով: Նոր սուլթանի որդի՝ Քեամիլ-Էդդինը ծնվել է 1875 թ., կրթութիւնը ստացել է Վիեննայում և ամուսնացած է գահընկէց արված խեդիվի քրոջ հետ: («Рус. Вѣд.»)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—о—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—8 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Յունվարի 4-ին և 5-ին Ստորին Վիսլայի աջ ափում մինչև Վարշաւա Մլավա երկաթուղին ընկած զօրաճակատում, մեր զօրամասերը, մի քանի կէտում ճակատելով թշնամուն, ունեցան նրա հետ մի շարք մանր ընդհարումներ: Աւելի խոշոր՝ թէև մասնակի բնոյթի կռիւներ տեղի ունեցան Կոնոպկի գիւղի մօտ, ուր մեր հրետանիները լռեցրին թշնամու ծանր թնդանօթներին Ռաձանովի և Բէժունի մօտ, որոնց առաջ հակառակորդը գրաւում է ամուր դիրքեր, նաև Դօբրժինի մօտ: Վերջին կէտում հակառակորդը փորձեց յարձակման դիմել, բայց մեր կրակից նա կանգ առաւ, որից գերմանացիք, տալով խոշոր կորուստներ, ստիպված էին նահանջել:

Ցերեկով, յունվ. 4-ին, թշնամին ռմբակոծեց Վիսլայի ձախ ափի. մեր դիրքերը Վիշէգրադի մօտ, բայց մեր թնդանօթային կրակը ստիպեց թշնամուն լռել:

Յունվ. 5-ին գերմանացիք ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցին Բզուր գետի ձախ ափում մեր գրաւած դիրքը և Վիտկովիցէ գիւղը:

«Арм. Вѣст.»-ում տպված է, որ գերմանացիք ուժեղ ռմբակոծութիւն են սկսել Պինչովի շրջանում:

Գալիցիայում փոփոխութիւն չը կայ: Տեղ-տեղ հակառակորդը կրակում էր ինտենսիվ կերպով և երկար ռմբակոծութեան ենթարկեց Տարնովը 42 սանտիմետրանոց թնդանօթներով Բադլովի անտառի կողմից, բայց այդ կրակի հետևանքներն աննշան են:

Կարպատների արևելեան մասում մենք գրաւեցինք Կիրլիբաբա լեռնանցքը:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Ֆալդիչէնից տեղեկացնում են, որ Մէառեկանիշ, Կիրլիբաբա և Եակօբէնի ամուր վայրերը ռուսների ձեռքն անցնելուց յետոյ, Աւստրիան այլևս չէ կարող արգելք լինել ռուս զօրքերի արշաւին դէպի Տրանսիլվանիայի սահմանները:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Յունվարի 2-ին աւստրիացիք երեք յաջորդական յարձակման դիմեցին մեր զօրքերի դէմ Պինչովից դէպի հարաւ: Յարձակումները վանվեցին աջողութեամբ մեր գնդերից մէկի ձեռքով պօրուչիկ Բօրտչէվիչի հրամանատարութեամբ, որով հակառակորդը ունեցաւ խոշոր կորուստներ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Յունվարի 6-ին բոլոր զօրաճակատներում էական փոփոխութիւններ չեն եղել: Տեղի ունեցան սովորական հրացանաձգութիւններ և թնդանօթաձգութիւններ: Բավայից հիւսիս ընկած շրջանում գերմանացիները երկու անգամ փորձեցին անցնել յարձակման, բայց կանգնեցին մեր թնդանօթային կրակից և հարկադրված եղան նահանջել: Յունվարի 5-ին գերմանացիները յարձակման դիմեցին Վիտկովիցցի շրջանում մեր ամրութիւնների վրա, լուսաւորելով նրանց պրօժեկտօրներով լուսարձակներով և 300 քայլի վրա վառած յարդով: Յարձակումը ետ մղվեց մեր թնդանօթային կրակով:

Յունվարի 5-ին Արևմտեան Գալիցիայում գերմանացիները ուժեղ կրակով հարուածելով մեր դիրքերը՝ խիտ խմբերով դիմեցին յարձակման և հասան երկաթալարի մեր ցանկապատին, բայց շնորհիւ մեր աջող կրակի՝ չը կարողացան առաջ անցնել և մեծ կորուստներով նահանջեցին իրանց դիրքերը: Բուքովինայում մեր զօրքերը շարունակելով աջողութեամբ առաջ գնալ՝ կռւով գրաւեցին Իօհաննեշտի գիւղը, որը 15 վերստի վրա է Դորնավատից դէպի հիւսիս: Այդ կռւում գերի են վերցվել օֆիցէրներ և զինուորներ:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5—7 յունվարի

ԼՕՆԴՈՆ.—Միայն այժմ Լոնդոնում տեղեկութիւններ ստացվեցին գերմանական օդագնացների՝ Օստենդէի վրա գործած արշաւանքի մասին: Մի խումբ օդագնացներ թռիչք են կատարել քաղաքի վրա: Օդագնացներից մէկը նետել է քաղաքի վրա 24 ռումբ:

ՊԱՐԻԶ.—Հավասի գործակալութիւնը տալիս է հաղորդագրութիւն դեկտ. 23-ից մինչև յունվարի 2-ը տեղի ունեցած պատերազմական գործողութիւնների մասին: Չափազանց վատ եղանակը արգելք է լինում ռազմական գործողութիւնների ընթացքին: Գլխաւորագոյն դէպքեր հանդիսանում են. 1) մեր աջողութիւնները տարածվում են նաև Իզերի շրջանի վրա, ուր մենք գրաւել ենք լայն ելք դէպի գետի այն կողմը. 2) Սուասոնի մօտ տեղի ունեցած կռիւը, ուր մեր փայլուն առաջխաղացումը մենք հարկադրվեցինք դադարեցնել Էն գետի վարարման պատճառով, որից փլվեցին երեք կամուրջ. այդ հանգամանքից օգտվելով՝ հակառակորդը շատ խիստ յարձակման դիմեց և մեզ ստիպեց նահանջել 5 կիլոմետր. 3) մենք առաջացել ենք Պերտի շրջանում, ուր գերմանացիների հակայարձակումները ոչ մի աջողութիւն չունեցան. 4) գերմանացիների անաջողութիւններն Արգոններում. 5) մեր յետագայ աջողութիւնները Վերին Էլզասում:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ.— Գերմանացիների մասնակի աջողութիւնը Սուասոնի շրջակայքում ամեն կերպ գերմանական մամուլը փքում է: Վօլֆի գործակալութիւնը տարածել է ամենաընդարձակ տեղեկութիւններ գերման զօրքերի հերոսական գործերի մասին, որոնք կռւում են Վիլհէլմ կայսրի ներկայութեամբ:

ՊԱՐԻԶ.—Հավասի գործակալութիւնը հաղորդում է. «Բէլգիական պատերազմական բեմում ձիւնախառն փոթորիկ է: Պատերազմական գործողութիւնները սահմանափակվեցին թնդանօթաձգութեամբ: Ձիւն է եկել նաև Արրասի շրջանում, ուր մեր ծանր թնդանօթները ստիպեցին մի քանի անգամ թշնամուն լռել: Լա-Բուասալի մօտ մենք հրդեհի պատճառով ստիպված եղանք թողնել լոյս յունվարի 5-ի գիշերը մեր դիրքերը, որոնք մենք յետոյ ետ խլեցինք: Յունվարի 5-ին հակառակորդն այդ տեղում վերսկսեց իր յարձակումները:

«Լոյս յունվարի 5-ին գիշերը թշնամին ռմբակոծեց Սուասոնի շրջանում Սէն-Պօլը:

«Սուասոնից դէպի արևելք, Ռէյմսի մօտ տեղի են ունենում թնդանօթային կռիւներ: Լեպրէտր անտառում մենք գրաւեցինք թշնամու դիրքերից մի քանիսը:

«Վօգէզներում ձիւնախառն մրրիկ է: Այդտեղ թնդանօթաձգութիւն է»:

ԼՕՆԴՈՆ.—«Ամստերդամ-Տելէգրաֆ» հաղորդում է, որ Իպրի մօտ լսելի է ուժեղ թնդանօթաձգութիւն: Գերմանացիները փորձ են անում նորից ռմբակոծել քաղաքը: Ծովափն են եկել զօրքեր, որոնք սպասում են լաւ եղանակի:

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորներ Դիւրան և Լաֆօն դիմել են իրանց ընկերակիցներին, խնդրելով միանալ իրանց ցանկութեան, որպէսզի Նոբէլի պրէմիան յատկացվի բէլգիական ժողովրդին, որը հերոսաբար կռւելով չէզոքութեան պաշտպանութեան համար՝ անգնահատելի ծառայութիւն մատուցեց խաղաղութեան գործին: Այդ որոշումը ներկայացվելու է Նորվեգիական ստօրթինգին: Լիօնի քաղաքային խորհուրդը միաձայն ընդունեց նման մի ցանկութիւն:

ԵԱՐՄՈՒՏ.—Յունվարի 7-ին թշնամու դիրիժաբլը մի քանի ռումբ նետեց և նիւթական աչքի ընկնող վնաս հասցրեց:

ԼՕՆԴՈՆ.—Ռումբերով Եարմուտում ջարդվել են շատ տների և խանութների ապակիներ: Մի մարդու գլուխ կտրվել է: Երկու ռումբ ընկել են ծովին մօտ, երկու ուրիշը ընկել են շէնքերի վրա: Մթութեան պատճառով «Ցէպպելինը» չէր տեսնվում, միայն շշիւն էր լսվում: 10 րոպէի մէջ ձգվել է 5 ռումբ: Սպանված են երեք հոգի: «Ցէպպելինը» ձգել է երկու ռումբ Շերինգամում և մի քանիսը Կրոմերում: Ժամը 10-ին երեկոյեան «Ցէպպէլինը» թռաւ Կինգսլինգ քաղաքի վրայով և չորս ռումբ ձգեց: Մի քանի ռումբ ձգվել են Սանդրինգէմի շրջակայքում, ուր ներկայումս գտնվում է անգլիական թագաւորը:

ՊԱՏԵՐԱԶՄ ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 յունվարի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Ռուսական ականանաւերը, մտնելով Սինօպի նաւահանգիստը, ջրասուզեցին «Մէօրգէս» շոգենաւը և 3 առագաստաւոր նաւ. նաւաստիներն ազատվել են:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Տուրն-Սեվէրինից հաղորդում են, որ Դունայի սերբիական ափի մօտ դրված ականը, տարվելով գետի հոսանքից, դիպաւ գերմանական մի քանի նաւերի, որոնք կանգնած էին աւստրիական նաւահանգստի մօտ հացահատիկ ու պղինձ բեռնած: Երեք նաւ պայթեցին և իսկոյն ջրասուզվեցին, չորրորդը լուրջ վնասուածքներ ստացաւ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մասնաւոր աղբիւրներից Հռոմից հաղորդում են, որ աւստրիական յածանաւերից մէկը վերաշինվում է, որովհետև աչքի ընկնող վնասներ է կրել: Աւստրիական ուրիշ մի քանի նաւեր վնասներ են ստացել ականներից, որոնք ձգված են եղել Ադրիատիկ ծովում:

ՀՌՈՄ.—Աւստրօ-ունգարական զինուորական գործակալը հաղորդում է ծովային մինիստրութեան, որ իտալական «Վարեզէ» նաւը երէկ զարնվել է ականի Պօլի շրջանում և սուզվել ջուրը: Ազատվել է մի մարդ:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

5—7 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Գերմանական կառավարութիւնը արգելել է լրագիրների ներմուծում բոլոր չէզոք երկիրներից, բացի այդ տէրութիւններում հրատարակվող պաշտօնական օրգաններից:

Նոր-Տարվայ առիթով Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը և սերբիական գահաժառանգ Ալէքսանդրը փոխանակեցին ողջոյնի հեռագիրներ:

Բարձրագոյնս հաստատութիւն գտաւ մինիստրների խորհրդի օրագրական որոշումը կառավարական օգնութիւն ցոյց տալու Լեհական թագաւորութեան նահանգների և պատերազմական գործողութիւններից վնասված մերձակայ վայրերի մասնաւոր վարկային հաստատութիւններին, որով պետական բանկին իրաւունք է տրվում բանալ վերոյիշեալ հաստատութիւններին առանձին ժամանակաւոր վարկեր, ընդամենը 50 միլիօն րուբլի գումարի:

Կարմիր Խաչի գլխաւոր վարչութեան գանձարկղը պատերազմի սկզբից մինչև 1915 թ. յունվարի 1-ը մտել են նուէրներ 4.919,515 րուբլի 73 կօպէկ:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ.—Վիէննայից տեղեկացնում են, որ Բուրիանը մեկնում է գերմանական գլխաւոր բանակը:

Բուդապէշտից հաղորդում են, որ Ունգարիայում բնակվողները և երկիր մտնողները պարտաւոր են ունենալ անցագիր:

ՍՕՖԻԱ.—Թագաւորի, մինիստրների և բարձրաստիճան պաշտօնեաների ներկայութեամբ բացվեց բուլգարական զինուորական ճեմարանը:

ՏՕԿԻՕ.—Ցինդաօյում մնացած գերմանացիների մէջ երևան են հանվել շատ զօրականներ զգեստները փոխած, որոնք կալանաւորվել են և ուղարկվում են իբրև գերի Եապոնիա:

ՍՕՖԻԱ.—Ազգային կուսակցութեան գերագոյն խորհուրդը Գէշովի նախագահութեամբ, քննելով Բուլգարիայի արտաքին դրութիւնը, բանաձև ընդունեց, որի մէջ ասված է, թէ անհրաժեշտ է Բուլգարիային՝ տիրանալ այն հողին, որ նա կորցրեց Բուխարէստի դաշնագրով և Կ. Պոլսի պայմանագրերով: Բանաձևը խորհուրդ է տալիս, իբրև միջոց այդ նպատակին հասնելու համար՝ կազմել կօալիցիօն կաբինէտ և բանակցութիւնների մէջ մտնել եռեակ համաձայնութեան պետութիւնների հետ բուլգարների միացման գաղափարի իրականացման վերաբերութեամբ:

ԼՕՆԴՈՆ.—«Ամստերդամ-Տելեգրաֆ» հաղորդում է, որ Բէլգիայի բնակիչներին բանտային պատժի սպառնալով արգելված է խօսել և քննել պատերազմի գործողութիւնների ընթացքը: Բանտերը լիքն են այդ կարգադրութիւնը խախտող մարդկանցով:

ՀՌՈՄ.—Արտաքին գործերի մինիստրը ընդունեց Գիննադիևին:

ԲԱԳՈՒ.—Առաւօտեան Թիֆլիսից եկաւ սանիտարական մասի Գերագոյն պետ Նորին Կայսերական Բարձրութիւն պրինց Ալ. Պետրովիչ Օլդէնբուրգսկի: Դիտեց Կարմիր խաչի և քաղաքում եղած միւս հիմնարկութիւնների լազարէթները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Նոր-Տարվայ առիթով սերբիական Պետր թագաւորը, մինիստր Պաշիչը և Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը և մինիստր Սազօնովը փոխանակեցին շնորհաւորական հեռագրեր։

ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 յունվարի

ՀՌՕՄ.—Հռոմը դարձել է բանակ վիրաւորների համար։ Հիւանդանոցները և հիւանդանոցների յարմարեցված դպրոցները լի են վիրաւորներով։ Որովհետև Հռոմում այլևս տեղ չը կայ վիրաւորների համար, ուստի վերջիններին տեղաւորում են ուրիշ քաղաքներում։

Սալանդրայի նախագահութեամբ հաստատվեց յանձնաժողով վնասվածներին օգնութիւն ցոյց տալու համար։ Իտալական քաղաքները ստորագրութիւն են սկսել յօգուտ վնասվածների։ Պարզվել է մինչև այժմ, որ սպանվածների թիւն անցնում է 33,000-ից։

ԲԵՐՆ.—Յունվարի 6-ին, գիշերը, Շվէյցարիայի հիւսիս-արևմուտքում զգացվեցին ստորերկրեայ հարուածներ հիւսիսից հարաւ ուղղութեամբ։ Մարդկանց հետ դժբաղդութիւն չի պատահել։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Գեներալ Ժօֆֆրը պաշտօնանկ է արել 5 ամիս ժամանակով 77 գեներալի, որոնք իրանց ստորիճանը ստացել են «պրօտեկցիայով». զօրքը վերակազմված է. Թուլամորթները և փօքրոգիները հրամանատարների կազմից հեռացված են. ոմանք փորձել են բողոքել Ժօֆֆրի վարմունքի դէմ, բայց վերջինս պահանջել է չը խառնվել իր գործերում, այլապէս ինքը հրաժարական կը տայ։

◆ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև պատերազմական հաշմանդամ գերիների փոխանակութիւնը կատարվելու է Շվէյցարիայում, Ռուսաստանի հետ՝ Շվէդիայում, աւստրիական և սերբիական գերիների փոխանակութիւնը տեղի է ունենալու Ռումինիայում։ Թիւրքիան նոյնպէս զիջել է պապի խնդրին՝ փոխանակելու գերիներին։

◆ Դանիական շրջաններում տեղեկութիւն է ստացվել, որ Ռումինիան հանդէս է գալու Աւստրիայի դէմ, եթէ անգամ Իտալիան երկրաշարժի պատճառով հանդէս չը գայ։

◆ Ստոյգ տեղեկութիւնների համաձայն, Լեհաստանում վերջին կռիւների ժամանակ գերմանացիներից ընկել են մօտ 300,000 մարդ։

◆ Գերմանիան չորս զօրագունդ է փոխադրել Էլզաս՝ Լեհաստանից։

◆ 150,000 բօլգար կոմիտաջիներ դաւադրութեամբ ներս են խուժելու Սերբիա՝ սերբ զօրքերի թիկունքի կողմից։ Միաժամանակ աւստրիական մեծաքանակ զօրքերը վճռական արշաւանք են գործելու սերբերի դէմ։ Ռուս զօրքերը Կարպատների վրայով աճապարում են միանալ սերբ զօրքերի հետ։

◆ Աւստրիան Իտալիայի միջոցով սեպարատ հաշտութիւն է առաջարկում երրեակ համաձայնութեանը։

◆ Անգլիական զօրքում մի յատուկ վաշտ է կազմված, բաղկացած՝ կամաւոր 300 կանանցից, որոնք բարձր հասարակութիւնից են։

◆ Ունգարական արիստօկրատիայի գաղտնի կոմիտէտը որոշել է յայտարարել Ունգարիան անջատված Աւստրիայից։

◆ Աւստրիական արտաքին գործերի մինիստր Բէրխտօլդի հրաժարականը եղաւ Վիլհէլմ կայսրի պահանջով։

◆ Վիլհէլմ կայսրը սուլթանին ուղարկել է կինեմատօգրաֆի ժապաւէն գերմանացիների բոլոր կռիւների պատկերներով։

◆ Գերմանական տեղեկութիւնների համաձայն, Բօլգարիան բաց է թողել Սերբիայի համար ռազմամթերքներ մեծ քանակութեամբ։

◆ «Р. Сл.»-ն հաղորդում է, որ վերջին ժամանակ Բէլգիայից ուղարկվել են 250,000 զինւոր ծանր թնդանօթներով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք 1) Թիֆլիսում ուսանող Միքայէլեանից 3 ր., Սիմէօն Բարխուդարեանից 10 ր., 2) Պետրոգրադից, Աննա Ամիրեանի, Մարգարիտ Ամիրեանի և Եւգինէ Աւետեանի ձեռքով հանգանակված 55 ր., 3) Հաղբատից, Գր. Բաբայեանից 3 ր., 4) Ղըլը-Արվաթից, Խաչ. Բաղդասարեանից 5 ր., 5) Նոր-Շէն գիւղից, Գաբ. քահ. Տէր-Կարապետեանի ձեռքով հանգանակված գիւղում 25 ր., 6) Զնաբերդ գիւղից (Հին-Նախիջևանի գաւ.) Խոսրով Մեհրաբեանից ծըխատէր Սարգիս քահ. Տէր-Ղուկասեանի և Աղասի-խան- Զիլֆիգարխանեանցի ձեռքով հանգանակված գիւղի հայ և պարսիկ ժողովրդի մէջ 60 ր.։ Գումարն է 161 ռուբլի։ Նախկին ստացված 3628 ր. 55 կ. գումարի (տես «Մշակ» № 2) հետ ստացել ենք **3789** ր. 55 կ.։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆ-ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք 1) Թիֆլիսում ա) Մանուկ Ճերմակեանից 50 ր., բ) Սիմէօն Բարխուդարեանից 10 ր., գ) Գէորգ Սպէնդիարեանից՝ յանձնելու Նպաստամատոյց Ընկ. 20 ր., դ) Ինժենէր Գ. Կիրակոսեանից յանձնելու «Նպաստամատոյցին» 25 ր., 2) Մեղրիից, ա) ուս.-ուսուցիչ Արշ. Տէր-Յօվհանեանից, հանգանակված Մեղրիում 42 ր. 98 կ. և Կուտեմինիսում 30 ր., շրջանային ուսուցիչների կազմակերպած երեկոյթներից՝ 72 ր. 73 կ., բ) Դ. Դանիէլեանից 5 ր., 3) Ղըլը-Արվաթից, Խ. Բաղդասարեանից 10 ր., 4) Դերբենտից, Պ. Միրզայեանից 5 ր., 5) Հաղբատից, Հ. Միրզոյեանից 1 ր., 6) Դիվիչիից, Գեր. Թաւրիզեանից 10 ր., 7) Ղըզլ-Թեփէից, Դ. Դօլուխանեանից 5 ր., 8) Մարտանսկայա կայարանից (Կուբանի շրջ.) Սեդրակ Զ. Զօլաքեանից, տրապիզոնցի թիւրքահայ պլանտատորների ժողովում հանգանակված 1635 ր. գումարի մի մասը՝ 558 ր. (ցուցակը կը տպվի առանձին), 9) Կոտլյարեվսկայա կայարանից, Յովհ. Մարտիրոսեանից 5 ր, 10) Նովօչերկասկից, Յովհ. Գրիգորեանից 3 ր., 11) Բաթումից, Երմոնէ Գալստեանից 5 ր., Գումարը 784 ր. 73 կ.։ Նախկին ստացված 3573 ր. 65 կ. գումարի (տես «Մշակ» № 3) հետ ստացել ենք 4358 ր. 38 կ.։

Վրիպակ.— «Մշակի» № 2-ի մէջ տպված յօգուտ փախստական-գաղթականների նուէրների ցուցակի մէջ 11-րդ նուէրը տպված է այսպէս. «Ստեփան Բաղինեանից», պէտք է լինի «Սիմէօն Մատինեանից»։

ՅՕԳՈՒՏ ՉՔԱՒՈՐՆԵՐԻ

Ստացել ենք յօգուտ չքաւորների, տօնի առիթով 1) Զաք. քահ. Զարգարեանից 10 ր., 2) բժշկապետ Ց. Գասպարեանից 10 ր., գումարն է 20 ր., և բաժանել կարօտեալներին։

ՊԷՏՔ Է ԿԱՆՕՆԱՒՈՐԵԼ

Մեր ներկայ ցաւոտ իրականութեան յարուցած հարցերից մէկն ևս և ամենակարևոր հարցը՝ հայ կամաւորների գործը կանոնաւորելու հարցն է։

Հայ ժողովուրդը, շատ հասկանալի և բնական պատճառներով, ողջունեց որոտընդոստ կերպով հայ կամաւորների երևան գալը ներկայ ռուս-թիւրքական պատերազմում։ Եւ սա առաջին անգամը չէ, որ հայ ժողովուրդը տալիս է կամաւորներ Թիւրքիայի դէմ մղվող պատերազմների մէջ։ 1877—78 թուերի ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ ևս հայերը տուին կամաւորների դրուժինաներ, որոնք գործում էին այնպիսի փորձառու, հմուտ զօրավարների հրամանատարութեան ներքոյ, ինչպէս գեներալ Լազարեվը, Տէր-Ղուկասովը։ Սակայն այն ժամանակվայ և այսօրվայ կամաւորների կազմակերպութեան և գործելակերպի եղանակը տարբեր էր, և այն ժամանակ դեռ հայերը զինւորական ծառայութեան չէին ենթարկված։

Այս անգամ՝ չը նայելով որ հայերը զինւորական ծառայութիւն են կատարում, բայց հայ ժողովուրդը մեծ ոգևորութեամբ ողջունեց կամաւորների հանդէս գալը և նրանց ցանկութիւնը՝ առանձնապէս օգնել ռուսական զէնքին և ուժեղացնել ռուս զօրքի շարքերը։ Այդ ոգևորութեան պատճառը, կրկնում ենք, շատ բնական է. ներկայ պատերազմից է սպասում հայ ժողովուրդը Թիւրքաց Հայաստանի ազատութեան հարցի վերջնական լուծումը։

Ուրեմն, կամաւորների հանդէս գալը ողջունել միայն կարելի է, ինչպէս և արեց հայ ժողովուրդը։ Սակայն որովհետև ամեն մի լաւ գործ, եթէ միայն նա դրված չէ լաւ, խելացի, առողջ հիմունքի վրա, եթէ սխալ է նրա գործելակերպը, կարող է տուժել, ուստի և ներկայումս կամաւորների գործի կանոնաւորումը դարձել է անհրաժեշտ, որովհետև, դժբաղդաբար, նա հենց սկզբից տարվում էր սխալ գործելակերպով։ Եւ այդ բանի մէջ միանգամայն մեղաւոր է Թիֆլիսի «Հայկական Կենտրոնական Բիւրօ» կոչված մարմինը, որ իր վրա է առել կամաւորների գործի վարումը։ Եթէ գործելակերպը սխալ չը լինէր, մենք այսօր չէինք լսի զանազան արտունջներ և բողոքներ՝ եկած կամաւորների կողմից, թէ իրանց չեն ընդունում, թէ մնացել են փողոցներում անտէր, անօգնական, թէ կուսակցական նեղ, գծուծ հաշիւներ են նկատվում և այլն։ Մանաւանդ վերին աստիճանի ծանր և ճնշող տպաւորութիւն պէտք է թողնէ հայ հասարակութեան վրա այն հանգամանքը, որ հեռաւոր Ռումինիայից 190 երիտասարդներ, թողնելով իրանց գործը, զբաղմունքը, ընտանիքը, վազել եկել են Թիֆլիս, սլանալու պատերազմի դաշտը, ոգևորված՝ կռւելու թշնամու դէմ, և յանկարծ նրանց գլխին սառն ջուր են մաղում, ասելով թէ կամաւորների պէտք չը կայ։ Գուցէ և այդպէս է, գուցէ և պէտք չը կայ. բայց չէ՞ որ Բիւրօն պարտաւոր էր նախատեսել, որ ընդհանուր ոգևորութեան պատճառով՝ կարող են ամեն կողմից կամաւորներ գալ. չէ՞ որ նա պէտք է յայտարարէր, որ այլևս պէտք չը կայ։ Միւս կողմից՝ ասել, թէ պէտք չը կայ, սխալ կը լինէր, որովհետև Բիւրօն ամեն օր ընդունում է նոր կամաւորներ։ Նոյնպէս և Աստրախանի կամաւորների դէպքը, որ մինչև այսօր չը պարզվեց, չը լուսաբանվեց Բիւրօյի կողմից, և հասարակութիւնը մնաց այն տպաւորութեան ներքոյ, թէ այդտեղ ինչ-որ կուսակցական անմաքուր հաշիւներ են շարժվել։ Ապա յայտնի է և այն փաստը, որ մի խումբ կամաւորներ, մօտաւորապէս 300 հոգի, և մի այլ խումբ՝ 200 հոգուց բաղկացած, գործում են Բիւրօյից անկախ, այլ խմբապետների ղեկավարութեամբ, և նրանց ծախքը հոգում է ամբողջովին կառավարութիւնը, մինչ Բիւրօյի անուան ներքոյ գործող կամաւորների խմբերի ծախքի 75°/₀ հոգում է կառավարութիւնը և միայն 25°/₀-ը ինքը Բիւրօն։

Որքան էլ «Մշակի» № 224-ի (1914 թ.) մէջ տպված 50 կամաւորների բողոքը ծանր տպաւորութիւն թողեց, բայց նա առիթ դարձաւ, որ յայտնագործվեց մի եղելութիւն, որ մինչև այսօր անյայտ էր մնացել հասարակութեան։ Տեղական մի հայ թերթ, խօսելով յիշեալ բողոքի մասին, յայտնեց, որ Հայկ. Կենտր. Բիւրօյից դուրս կայ և գործում է նաև մի այլ մարմին՝ «Զինուորական պատասխանատու մարմին»։ Ի՞նչ մարմին է դա, ո՞վ է ընտրել նրան, ու՞մ առաջ է պատասխանատու այդ զինուորական մարմինը, քանի որ նա յայտարարվում է ոչ թէ կից Բիւրօյին, այլ անկախ, դա ոչ ոքի յայտնի չէ։ Ապա բոլոր նշաններից երևում է, որ այդ «պատասխանատու զինուորական մարմինը» բաղկացած է միայն մի հոսանքի կամ կուսակցութեան մարդկանցից, ուստի և այդտեղ պէտք է որոնել, մեր կարծիքով, բուն պատճառը այն ցաւալի միջադէպերի, որոնք տեղի են ունենում, ինչպէս Աստրախանի և Ռումինիայի կամաւորների միջադէպերը։

Պէտք է ասած, որ ինքը Բիւրօն ևս չէ կարելի համարել «ազգային», քանի որ կազմված է ոչ օրինաւոր եղանակով, այլ գլխաւորապէս կօոպտացիայի սիստեմով, ուրեմն միակողմանի. բայց և այնպէս, լաւ-վատ ճանաչված էր հայ հասարակութեան կողմից իբրև կամաւորների գործը վարող մարմին, թէև նա իրան սեփականել է և շատ ուրիշ ֆունկցիաներ՝ ազգային և քաղաքական՝ բոլորովին ուզուրպատորական ձևով։ Սակայն, կրկնում ենք. լաւ թէ վատ, առաւել կամ նուազ չափով նա ճանաչված էր հայ հասարակութեան կողմից իբրև մի կենտրոնական մարմին, բայց այժմ իմանում ենք, որ նրա կողքին և ոչ նրան կից կայ և մի այլ անյայտ մարմին, որ կոչվում է «Զինուորական պատասխանատու մարմին»։ Սա շատ զարմանալի է և մեծ տհաճութեամբ պէտք է ընդունվի հայ հասարակութեան կողմից, որովհետև այդ «պատասխանատու» մարմինը իսկապէս մի «անպատասխանատու» մարմին է, որ մի որոշ կուսակցութիւն կազմել է և այժմ ձգտում է հանդիսանալ ղեկավար։

Եւ ահա այդ բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, և որպէսզի զանազան կողմերից եկած և եկող հայ կամաւորները հնարաւորութիւն ունենան օգտակար լինել ռուսական զօրքին, մեր կարծիքով, աւելի նպատակայարմար կը լինի, եթէ բոլոր կամաւորները ուղղակի մտնեն ռուսական զօրքերի շարքերի մէջ և այլ ևս հայ կամաւորների առանձին խմբեր չը լինեն։ Եւ այդ դէպքում՝ կամաւորների ծախքը կը հոգայ կառավարութիւնը։ Բացի դրանից՝ մենք կազատվենք անյայտ «պատասխանատու զինուորական մարմիններից», և նրանց վրա կատարվող անհագին ծախքերից, որ ապարդիւն պէտք է նկատել։ Տ.

ԶԱՒԱԴ ԲԱԼՈՒՂԵԱՆ

Զէրքէզահայոց մայրաքաղաք Արմաւիրում հայ մտքի, զգացումի և արժանապատւութեան մարմնացած ներկայացուցիչ, երկար տարիներ եռանդուն հասարակական գործիչ երդուեալ-հաւատարմատար Զաւադբէկ Բալուղեանը մահացել է յանկարծ։ Գոյժը ինձ հեռագրել է եղկելի ամուսինը, որը հաղորդում եմ կսկծալով յարգոյ խմբագրութեանդ։ Ա. Ջէթվաճեան

Ցաւով արձանագրելով այս լուրը, պէտք է ասենք, որ Զաւադ-բէկ Բալուղեանի մահը ոչ միայն կորուստ է հայ հասարակութեան համար, այլ և հայ գրականութեան համար, իբրև հայ շնորհալի բանաստեղծի։ Մեր առանց այն էլ աղքատիկ գեղարուեստական և բանաստեղծական գրականութեան համար զգալի պէտք է լինի այդ վաղաժամ կորուստը։

Մեր վշտակցութիւնը յայտնելով, յաջորդ անգամ կը տանք աւելի մանրամասն կենսագրական տեղեկութիւններ։ Հ. Ա.

«ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑԻ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Չորեքշաբթի, յունվարի 7-ին, ցերեկվայ ժամը 12—2-ին կայացաւ «Հայ Նպաստամատոյց Ընկերութեան» նախաձեռնութեամբ նշանակված խորհրդակցական ժողովը, որին մասնակցում էին Թիֆլիսում գոյութիւն ունեցող և փախստական-գաղթականների խնամատարային գործով զբաղվող մարմինների ներկայացուցիչները, ի բաց առեալ Կ. Հ. Բ. Ընկ. և նրան կից կենտր. կոմիտէտը, որ չէր ուղարկել ներկայացուցիչ։ Ժողովին մասնակցեց նաև պ. Գր. Պալեան, որ եկել է Բագուից իբրև այդտեղի բիւրօյի անդամ և գնում է Ջուլֆա՝ գաղթականների գործով։

Ժողովին նախագահում էր Հ. Առաքելեան, որ բանալով նիստը յայտնեց հետևեալը.

«Ներկայումս գաղթականներին օգնելու գործով թէ այստեղ Թիֆլիսում, թէ այլ քաղաքներում կան մի քանի, նոյն իսկ բազմաթիւ կոմիտէներ և մարմիններ, որոնք, սակայն, գործում են ուրոյն ուրոյն, անջատ և անկախ իրարից։ Այդպիսի գործելակերպից կարող է տուժել օգնութեան գործը. անհրաժեշտ է, որ օգնող բոլոր մարմինների և կազմակերպութիւնների միջև լինի մի ընդհանուր կապ և գործունէութեան միութիւն, որ կատարվի աշխատանքի բաժանում։ Եւ որովհետև այժմ պարզվում է, որ 1) փախստական-գաղթականների գլխաւոր կենտրոնավայրը Երևանի նահանգն է, 2) կառավարութիւնն ինքն աշխատում է տեղաւորել փախստականներին այդ նահանգի գիւղերում, 3) նուիրաբերութիւնների գլխաւոր հոսանքն ևս ուղղվում է Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ինչպէս Ռոստովի, Արմաւիրի, Պետրոգրադի և այլ տեղերի նուիրատուութիւնները, ուստի անհրաժեշտ է գումարել մի խորհրդակցական համագումար՝ փախստականներին օգնող բոլոր հայկական կոմիտէների, ընկերութիւնների, մարմինների ներկայացուցիչներից, գործունէութեան մի որոշ պլան մշակելու և այդ գործունէութիւնը միացնելու նպատակով։ Այս միտքը, ինչպէս երևում է պ. Եր. Թաղիանոսեանի հեռագրից, ծագել է և Երևանում։ Ահա այս հարցը պէտք է դառնայ այսօրվայ խորհրդակցութեան առարկայ»։

Ժողովականներից հետզհետէ խօսեցին Ց. Սպէնդիարեան, Խ. Արզումանեան, Նազարեան, տ. Հ. Ափթանդիլեան, Ս. Կանայեան, Գր. Վարդանեան, Գ. Պալեան, Ա. Աթանասեան, ցոյց տալով նոյնպէս անհրաժեշտութիւնը գործունէութեան մի ընդհանուր ծրագիր ունենալու և օգնութիւնը համաչափ եղանակով կատարելու։ Ապա խորհրդակցութիւնը կայացրեց հետևեալ որոշումը.

«Դիմել Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին և խնդրել գումարել Էջմիածնում Իր պատուաւոր նախագահութեան ներքոյ մի համագումար փախստական գաղթականներին օգնելու համար հաստատված բոլոր ընկերութիւնների և կազմակերպութիւնների ներկայացուցիչներից՝ միացնելու համար նրանց գործունէութիւնը և մշակելու համար գործողութեան մի ընդհանուր պլան։ Այս որոշումը ներկայացնել Նորին Վեհափառութեան պ. Գր. Եւանգուլեանի միջոցով»։

Նիստից յետոյ ուղարկվեց Երևան պ. Գր. Եւանգուլեանին հետևեալ հեռագիրը՝ խորհրդակցութեան կողմից.

«Այսօր Նպաստամատոյց Ընկերութեան վարչութեան նիստում, մասնակցութեամբ տեղական համանման կազմակերպութիւնների, որոշվեց՝ խնդրել Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին գումարել Էջմիածնում Իր պատուաւոր նախագահութեամբ ժողով թէ Թիֆլիսում և թէ ուրիշ քաղաքներում ծագած վերոյիշեալ բոլոր ընկերութիւնների և կազմակերպութիւնների ներկայացուցիչներից՝ նրանց գործունէութիւնը միացնելու հայ փախստականներին օգնելու գործում։ Խորհրդակցութիւնը խնդրում է ձեզ մատուցանել այդ միջնորդութիւնը Նորին Վեհափառութեան, ի նկատի ունենալով որ անհրաժեշտ հարկ կայ մշակել գործունէութեան մի ընդհանուր պլան։

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ

Հայ փախստականների օգտին եղան հանգանակութիւններ տուփերով Թիֆլիսի համարեա բոլոր եկեղեցիներում Ծննդեան գիշերը, պատարագին եկած աղօթողների մէջ։ Վանքի եկեղեցու բակում, յունվարի 6-ին, Մկրտութեան օրը, բացի մուտքի մօտ, եղաւ հանգանակութիւն հանդիսին եկած անհամար բազմութիւնից։ Յունվարի 7-ին, Մեռելոցի օրը, տեղի ունեցաւ հանգանակութիւն Խօջիվանքում։

—

Բագւում գաղթականներին օգնող բիւրօյի երկրորդ լիազօր Գ. Պալեան յունվ. 7-ի երեկոյեան մեկնեց Երևան։

—

Ինչպէս երևում է տպված կոչերից, Թիֆլիսի երեցփոխներից և ծխատէր քահանաներից նոյնպէս կազմվել է մի յանձնաժողով, որ շրջելու է Թիֆլիսի հայ եկեղեցիների ծխականների տները և ժողովելու տաք իրեր փախստականների համար։

—

Յունվարի 7-ին Թիֆլիս հասան մեծ թըւով պարսկահայ փախստականներ։

—

Օդեսայի հայկ. կոմիտէտը հեռագրով 4000 ր. է փոխադրել Վեհափառի անունով յօգուտ փախստականների։

—

Պատգամաւոր Կէրէնսկին պատմում է, որ հայ փախստականները Թուրքիայից Կովկաս անցնելիս ճանապարհին թողնում են բազմաթիւ երեխաների դիակներ, որոնք մահանում են ցրտից ու քաղցից։

—

Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայեվնայի կոմիտէտը Կովկասի փախստականների համար յատկացրել է 50,000 ռուբլի։

—

Զէմստվային միութեան գլխաւոր կոմիտէտը հեռագրեր է ստացել Շէյլինից, Շերէմէտևից, Եւանգուլեանից և Պապաջանեանից փախստականների սոսկալի վիճակի մասին։ Հեռագրերի մէջ ասված է, որ կառավարութեան և հասարակութեան շուտափոյթ օգնութիւնը հարկ անհրաժեշտ է։

—

Բագւաբնակ Մ. Գ. Ալիբէկեան փախստականների օգտին նուիրել է 3000 ր., որպիսի գումարը ուղարկել է Էջմիածին Կաթողիկոսի անունով։

ԱՒԵՐՎԱԾ ԳԻՒՂԵՐ

Ալէքսանդրօպօլ, 30 դեկտ.

Երբ թիւրքերը մտան Սողանլուի անտառը և այնտեղ սովից կոտորվելու էին, նրանք գիշերային յարձակումների ենթարկեցին մօտակայ յոյն գիւղերը և այնտեղ ինչ որ գտան՝ տարան։ Այդ գիւղերից ոմանք յանկարծակի եկան և իսպառ կործանվեցին, ոմանք կիսով չափ, իսկ շատերը փախան։ Սարիղամիշի շրջապատում թիւրքական կոտորածի, աւերի և աւարի մատնված յոյն գիւղերը հետևեալներն են.

1) Բէօյւլիւկ-Բաշ, 2) Կամիշլի, 3) Բէգլիգեան-Գէչիդ, 4) Ամիրխան, 5) Չէհլիջա, 6) Ենիջա, 7) Դիվլիկ, 8) Եալ-Օղլի, 9) Բարդուզ, 10) Վերին-Ջերմուկ, 11) Ներքին-Ջերմուկ, 12) Վերիշէն, 13) Ներքին Սալուտ, 14) Չիլախլի, 15) Եաղբասան, 16) Զաթախ, 17) Եօլ-Գէչմազ և 18) Ալի-Սօֆի։

Այս գիւղերից փախած յոյներից շատերը ապաստանել են Կարս քաղաքում, Շիրակում (Արևելեան և Արևմտեան)։ Սրանց վնասների մասին մանրամասն հաշիւ դեռ չէ կազմված։ Այս օրերս տեղական յոյն քահանաները գնացին, որպէսզի մանրամասն հաշիւ կազմեն և ներկայացնեն ուր հարկն է։

—

Արդահան-Գէօլայից գաղթած յոյներից մօտաւորապէս 200 տուն ապաստանել են Բայինդուր հայախառն յոյն գիւղը, ուր յոյների հետ հայերը հաւասարապէս հիւրընկալել և խնամել են։ Այս մասին հարկ եղած տեղեր իրանց անհուն գոհունակութիւններն յայտնելուց յետոյ, ինձ խնդրեցին, որ երկու տողով յայտնեմ խմբագրութեանդ։ Աղեբէգ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ռումինիայի հայ կամաւորները

Քիշինեվ, 19 դեկտ.

Սրանով հերքում եմ այն լուրը, որը տարածված է հասարակութեան մէջ, թէ ռումինական կառավարութիւնը հայ կամաւորներին բաց չէ թողնում սահմանը անցնելու։ Ես մի քանի անգամ հեռագրել եմ «Մշակին» կամաւորների մասին և դա վերաբերվել է միշտ Ռումինիայից եկած կամաւորներին։ Իսկ ինչ վերաբերում է Բօլգարիայի մասին, որքան ես իմացայ, բօլգար կառավարութիւնը, չը գիտեմ ինչու և ի՞նչ պատճառներով, դեռ ևս չէ տալիս անցագիր հայ կամաւորներին։

Այսօր էլ տեղս հասաւ Ռումինիայի հայ կամաւորների չորրորդ խումբը, թւով 106 հոգի, Առաքել Ժամկոչեանի ղեկավարութեամբ. խումբը դուրս է եկել Կօնստանցա քաղաքից։ Տեղիս հայկ. կոմիտէն իսկոյն պատրաստութիւն տեսաւ նրան ընդունելու և ճանապարհելու։ Նահանգապետի կարգադրութեամբ՝ խմբին յատկացրին երեք վագոն։ Եր. ժ. 5-ին կայարանում արդէն հաւաքվել էր բաւականին բազմութիւն՝ ճանապարհելու կամաւորներին։ Ուրախ, ոգևորված վեհ գաղափարով՝ հայ կամաւորները մեկնեցին Թիֆլիս։

Գ. Փարաջանեան

—

Գաղթականների խնամքը

Էջմիածին, 31 դեկտ.

Ամեն օր գաղթականների բազմաթիւ ընտանիքներ գալիս են Էջմիածին։ Նրանց դրութիւնը վերին ծայր սոսկալի է. ձմեռը սաստիկ լինելու պատճառով երեխաները մահանում են։ Կան երեխաներ, որոնց ծնողները յայտնի չեն, և ընդհակառակը շատ ծնողներ կորցրել են իրանց երեխաներին։ Օգնութիւն այստեղ թէև ցոյց են տալիս նրանց, սակայն շատ սահմանափակ, անկանոն ու անկազմակերպ։ Շատ ընտանիքներ դուրսն են մնում տեղ չը լինելու պատճառով, մինչդեռ վանքի շինութիւններից ոմանք դատարկ են և կարելի էր այնտեղ հիւրընկալել նրանց։ Բարեգործական Ընկերութիւնը և բիւրօն քար անտարբերութիւն են ցոյց տալիս։ Յովհ.

—

Մի բռնանեղի դէպքի առիթով

Զաքաթալա, 29 դեկտ.

Մի քանի տարի է, ինչ մեր շրջանում բնակութիւն են հաստատել ռուս գաղթականներ, որոնք ժրաջան մեղուների նման՝ օրն ի բուն աշխատում են և և իրանց դառն աշխատանքի պտուղը՝ կաղամբ, գետնախնձ ձոր և այլն և այլն բերում քաղաքիս շուկան ծախելու համար։

Եւ այն օրվանից, երբ այդ գաղթականները ոտ են դրել մեր երկրում, ամեն բան էժանացել է, առաւել լաւ է ասել՝ ճարվում է, որովհետև ծոյլ ազգաբնակութիւնը այնքան է վարում, ցանում և հնձում, որքան իրա համար միայն հարկաւոր է… Հէնց այդ պատճառով էլ այս բարեբեր, լայնածաւալ երկրում ոչինչ չէր ճարվում։

Սակայն ցաւելով պիտի խոստովանենք, որ շրջանիս լեզգի և Թուրք ազգաբնակութիւնը անասելի նեղութիւններ է պատճառում այդ Թշուառ, աշխատասէր, կուլտուրական ժողովրդին, խրտնեցնում, զանազան երկիւղներ տալիս, որպէսզի հեռանան երկրից… Մինչև օրս նրանք հաստատ բնակութեան տեղ չեն ստացել, այլ հողերը կապալով են վերցրել, ինչպէս օրինակ «Բախտալու» և այլ տեղեր։

Եւ ահա երէկ գնդակի երեք հարուածով տեղն ու տեղը սպանվում է 70 տարեկան մի ծերունի՝ Կոմլեվ ազգանունով…

Իսկ Թալա գիւղի ժողովուրդը նեղում է տմարդօրէն՝ այնտեղ գտնվողներին…

Սօյզադէ

—

Խաբրիկներ Մոզդոկից

Մոզդոկ, 26 դեկտ.

Տեղիս հայկ. կոմիտէն փոխադրեց 180 զոյգ Թաղիքեայ երկար գուլպաներ, 16 հատ մորթէ փափախներ և այլ մի քանի իրեր, Թիւրքահայերին և հայ կամաւորներին հասցնելու։

Մի խումբ օրիորդներ յօգուտ հայ կամաւորների իրանց մէջ հաւաքած 23 ր. 28 կ. փոխադրեցին Թիֆլիսի հայ կանանց կոմիտէտին՝ նպատակին հասցնելու։

Ծխ. դպրոցի հոգաբարձու Գր. Նազարեանը ի յիշատակ իր վաղամեռիկ դստեր 50 ր. նուիրաբերեց դպրոցին, որդեգրեց մի աշակերտուհի՝ հոգալով նրա ուսման և հագուստեղէնի ծախսերը, մինչև ծխ. դպրոց աւարտելը։ Ցուցարկաւոր քառաձայն երգեցիկ խմբին նուիրած 25 ր. խումբը յատկացրեց յօգուտ հայ կամաւորների և յանձնեց տեղիս հայկ. կոմիտէին,

Եղանակը զարմանալի տաք է և խոնաւ։ Բացվել են անտանելի ցեխերը։

Այսօր յօգուտ սերբիացի վիրաւորների՝ ռուս սիրողների խումբը տալիս է մի ներկայացում։

Ռ. Իսկէնդէրեան

—

Գիւղն էլ անտարբեր չէ

Ցարսկիէ-Կոլոդցի, 1 յունվ.

Տեղիս հայ գաղութը (30 տուն) հնարաւորութեան չափ օգնութիւն հասցրեց պատերազմից վնասվածներին։ Հաւաքվեց 129 րուբլի 50 կոպ. և ուղարկվեց Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին՝ այդ գումարը յատկացնելու յօգուտ վիրաւորների, հայ կամաւորների և փախստականների։ Բացի սրանից ռուսաց զէնքի աջողութեան համար հայերը կատարեցին մաղթանք և հեռագիր ուղարկեցին Կովկասի փոխարքային, յայտնելով հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ Թագաւոր Կայսրին և հայրենիքին։ Այս հեռագրի առիթով հայ հասարակութիւնը արժանացաւ ստանալ բարձրագոյն շնորհակալութիւն։ Կարմիր Խաչի համար էլ տուփերով հաւաքվեց փող։ Բ. Ընկ. խորհուրդը կազմակերպելու է դրօշակների վաճառումն իր ճիւղերի միջոցով։

Առևտուրը մեզանում ընկած է։ Վաճառականների տրամադրութիւնը մռայլ է։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Յունվարի 6-ին Երևանեան հրապարակում Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ ուղղափառ հոգևորականութիւնը համաժողովրդական հանդիսաւոր մաղթանք կատարեց ռուսների՝ Թիւրքերի վրա տարած յաղթանակի առիթով։ Մաղթանքին ներկայ էին փոխարքայի ամուսին կոմսուհի Ե. Ա. Վօրօնցով-Դաշկովան, փոխարքայի օգնականներ Պետերսօնի և Միշլաևսկիի ամուսինները, Թիֆլիսի շրջանի կոմենդանտ և պետ գեն. Ս. Վ. Վօլսկի, փոխարքայի խորհրդի անդամները, նահանգապետ Ի. Մ. Ստրախօվսկի, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, մուսուլման և շիա հոգևորականութեան ներկայացուցիչներ և բազմաթիւ ժողովուրդ։

◆ Նորին Կայսերական Բարձրութիւն պրինց Օլդենբուրգսկին յունվարի 6-ին Սարիղամիշից վերադառնալով այցելեց փոխարքային, նրա զինուորական մասի օգնական Ա. Զ. Միշլաևսկիին, դիտեց նաւթլուղի լազարէթները և նոյն օրը ճեպընթաց գնացքով մեկնեց Թիֆլիսից։

◆ Կովկ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. Նախագահուհի տիկին Հ. Մարտիրոսեանը հրամանատարից ստացել է հետևեալ նամակը. «Ես պ.պ. օֆիցէրները ստանալով պօրուչիկ Պետրով-Դենիսովի բերած Ծննդեան ընծաները՝ յանձին ձեր Կովկ. Հայուհեաց Բ. Ընկ. յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը՝ դէպի մեր բատալիոնի պաշտօնեաները ունեցած հոգատարութեան համար, և բոլոր այն անձանց, որոնք մասնակցութիւն են ունեցել այդ նուիրաբերութիւնների մէջ։ Այս կենդանի կապը ժողովրդի և բանակի միջև՝ հանդիսանում է իսկական գրաւականը լիակատար յաղթութեան Թշնամու վրա»։

◆ «Մշակի» խմբագրութիւնն իր շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր անձանց ու հաստատութիւններին, որոնք Նոր-Տարվայ առիթով ցանկութիւններ արտայայտեցին տեսնել «Մշակն» աւելի բարգաւաճ ու աջող պայմանների մէջ։

◆ Պետական Դումայի անդամ Միք. Պապաջանեանը վերադարձաւ երէկ Թիֆլիս իր կատարած ճանապարհորդութիւնից դէպի Ջուլֆա և Աղեքսանդրօպոլ և իջևանեց «Օրիանտ» հիւրանոցում։

◆ Մեզ հաղորդում են հետևեալ քստմնելի երևոյթի մասին։ Թիֆլիսի շատ տնատէրեր իրանց կենողներին Թոյլ չեն տալիս ուրիշ քաղաքներից գաղթած ազգականներին կամ բարեկամներին բնակեցնել իրանց բնակարաններում։ Հարկ ենք համարում յայտնել, որ ոչ մի օրէնք տնատէրերին չի սեփականացնում այդ տեսակ իրաւունք, հետևաբար նրանց վարմունքը բացի անբարոյական լինելուց և ապօրինի է։ Ուստի ցանկալի է, որ ոստիկանութիւնը ուշադրութիւն դարձնէ այդ տեսակ անպատկառ տնատէրերի վրա և սահմանափակէ նրանց օրինապահութիւնը։

◆ Թիֆլիսում Մոսկվայից համառուսական քաղաքների դաշնակցութեան գլխաւոր կոմիտէից ստացվել է մի տեղեկութիւն այն մասին, թէ կոմիտէտը, համաձայն Ս. Խ. Սուլխանովի միջնորդութեան, ուղարկում է այն իրերի, սպիտակեղէնի և տաք շորերի մի մասը, որ հաւաքվել է Մոսկվայում կազմակերպված «սպիտակեղէնի շաբթում»։ Ուղարկվելիք այս բոլոր իրերը պէտք է բաժանվեն փախստականներին։

◆ Անցած օրերում կովկասեան ռազմաբեմ ուղարկվեց վրացի կամաւորների խմբերի մի մասը։

◆ Յունվարի 4-ին Ժողովրդական Տանը պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտրոնական կոմիտէտը ձրի տօնածառ կազմակերպեց պահեստիների երեխաների օգտին։ Նրանց Թիւը հասնում է 550-ի։ Բոլոր երեխաներին բաժանվեցին քաղցրաւենիք և ընծաներ։ Նոյն օրը երեկոյեան պահեստիների երեխաների մի ուրիշ խմբի համար կազմվեց նոր տօնածառ։

◆ Յունվարի 8-ից Ներսիսեան դպրոցի զբաղմունքները տեղի են ունենում Յովնանեան և Գայիանեան դպրոցներում, ցերեկ. ժ. 2-ից յետոյ։

◆ Երևանից Մուշեղեան հեռագրում է, որ հայ կամաւորների խմբապետ Անդրանիկը ստացել է ս. Գէորգիի շքանշան՝ Երևանի զօրքի զօրապետի ձեռքով։

◆ Երէկ տեղի ունեցաւ պրապօրշչիկ Շահնազարեանի Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ Թաղմանը ներկայ էր մեծ բազմութիւն։

◆ Երէկ և նախընթաց երեկոներին սանիտարական վագոններով Թիֆլիս բերվեցին վիրաւորների նոր խմբեր, որոնց տարան Կովկասի միւս քաղաքները։

◆ Այս երեք օրվայ ընթացքում Թիֆլիսի վրայով Ռուսաստանի ներքին նահանգները տարան գերի Թիւրք ասկեարների և քիւրդերի։

◆ Վաղը, երեկ. ժամը 8-ին, Հասարակական ակումբում (Գրիբոեդովսկայա № 22) կը կայանայ զրոյց ալբուստի Թանգութեան մասին, մասնակցութեամբ իրաւաբանների և հասարակական միւս գործիչների։ Զրոյցից յետոյ նշանակված է համերգային բաժին։

◆ Վրիպակ.— «Մշակի» № 3-ի սեփական հեռագիրների բաժնում Արմաւիրից խփված հեռագրի տակ լոյս է տեսել Գր. Զալխաշեանի անունը, փոխանակ դրված լինելու նոյն անունը՝ Ռոստովից տրված հեռագրի տակ։ Նոյն համարի ներքին լուրերի բաժնում ևս մի սխալ է սպրդել. 16-րդ լուրի մէջ ասված է, թէ Կ. Հ. Բ. Ընկ. ձրի ճաշարանին Ծննդեան տօնի առիթով Բագուից 30 պուդ ձուկ է ընծայել ձկնավաճառ Օսիպովը, մինչդեռ նուիրատուն ոչ թէ Օսիպովն է, այլ առևտ. տուն եղբ. Մայիլեանները։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Կուլտուրան սիրողների վրաց ընկերութեան վարչութիւնը որոշել է կազմակերպել երկու մասնաժողով։ Դրանցից մէկի պարտականութիւնը լինելու է այն, որ պատերազմում վիրաւորված և սպանված վրացի զինուորների մասին հաւաքէ ամեն մի տեղեկութիւն, իսկ երկրորդինը այն, որ Թիֆլիսում և այլ քաղաքներում գտնվող վրացի զինուորներին հասցնէ գրքեր և լրագիրներ։

◆ Նոր կլուբի անդամների ընդհանուր ժողովը Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. վարչութեանը նուիրաբար տուել է 800 ր., որպէսզի վարչութիւնը հնարաւորութիւն ստանայ դպրոցների Թիւը շատացնելու։

◆ Ինչպէս հաղորդել էինք, վրաց յայտնի բանաստեղծ Ակակի Ծերեթելին ծանր հիւանդացել է և այժմ գտնվում է Սաչխերի գիւղում իր կալուածքում։ Նրան խնամող բժ. Ջօզաշվիլի մի հեռագրով «Սախալխո Փուրցելի» Թերթին յունվարի 6-ից յայտնում է, որ բանաստեղծը արիւնհոսութիւն է ունեցել ուղեղից, անդամալոյծ է եղել ձախ ձեռքը և ոտքը և դրութիւնը ծանր է։ Տեղափոխել բանաստեղծին հնարաւորութիւն չը կայ։ Հիւանդութիւնից մի շաբաթ առաջ բանաստեղծն սկսել էր մի նոր պօէմա, որին նիւթ են ծառայում ժամանակակից պատերազմը և ընթացիկ անցքերը։ Բանաստեղծի երազն էր շուտ վերջացնել այդ պօէման, որը և իսկապէս աւարտել է դեկտ. 24-ին, իսկ 25-ին Ծննդեան օրը նրա բարեկամը նրան գտնում է խիստ տխուր դրութեան մէջ։ Հազիւ լեզուն շարժելով՝ բանաստեղծը գանգատվում է նրան. «Իմ բանը վատ է, վատ, ես այլ ևս անկողնից չեմ ելնի»։ Բարեկամը իսկոյն բժիշկ է կանչում։

ՄԱՄՈՒԼ

◆ Վրաց «Կլդէ» շաբաթաթերթը «Зак. Рѣчь» լրագրից արտատպելով «Մշակի» № 290-ում Ս. Յարութիւնեանի, Իշխ. Թումանեանի և այլոց Թիֆլիսից հեռանալու մասին տպված յօդուածի Թարգմանութիւնը՝ իր կողմից աւելացնում է հետևեալը.

Մենք էլ միացնում ենք մեր համակրանքը հայ յարգելի լրագրին, որպէս մեր պաշտօնակցի, սակայն չենք կարող չը յիշեցնել «Մշակին» այն, որ միթէ նոյն կերպ չը վարվեցին եղբ. Ալիխանեանները, որոնք առանց ամաչելու անտէր Թողին իրանց երաժշտական դպրոցը, Թողնելով ծառայողներին և ուսուցչական կազմը առանց ռոճիկի։ Միթէ այսպէս չը վարվեց Դոլուխանովը tutti quanti. Այստեղից կարելի է գալ այն եզրակացութեան, որ հայ ազգը, նրա ժողովուրդը և իսկական ազգային պատրիոտ դեմօկրատիան իր բաղդը չը պէտք է հիմնէ այն խոշոր բուրժուազիայի խոսքերի վրա, որը հաստատուն է մինչ այն ժամանակ, քանի դեռ երկիւղ չէ սպառնում նրա ոչ կարողութեանը, ոչ անձնաւորութեանը։ Ասուած չանի, որ այն վտանգը նորից կրկնվի, Թէ չէ մենք դրանց նմաններին չենք տեսնի միայն, այլ ամբողջ հարուստ դասակարգը գօզանի կերպով կը հեռանայ, որովհետև նրա համար պատրիոտիզմը և ժողովրդի սէրը՝ ստամոքսային հարց է միայն»։

Նոյն «Կլդէն» խորին ցաւակցութիւն է յայտնում այն մասին, որ ստեղծված անտանելի պայմանների շնորհիւ հայերը տասնեակ հազարներով ստիպված են Թողնել իրանց հայրենիքը և մտնել Կովկաս, ուր այնքան նեղուածք է, որ բուն տեղացի ժողովրդի համար անգամ տեղ չը կայ։ Գալով օգնութեան խնդրին, շաբաթաթերթը ներկայ պայմաններում անարդարութիւն համարելով կառավարութիւնից նպաստ խնդրելը՝ արդարացի է համարում դիմել հասարակութեանը և մանաւանդ այն հայերին, որոնք Կովկասում միլիոնների կարողութիւն են ձեռք բերել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 յունվարի

Կովկասեան հայ օրիորդների ընկերութիւնը Ծննդեան գիշերը կազմած «Աւետիս» շրջելուց հաւաքեց 1017 րուբլի, կնքած արկղիկներով։

Ընկերութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր այն օրիորդներին և պատանիներին, որոնք ամենաջերմ աջակցութիւն ցոյց տուեցին մինչև ուշ գիշեր շրջելով լայնածաւալ քաղաքի Թաղամասերը։ Մի այդպիսի խորհրդաւոր գիշեր, երբ ամեն ոք ցանկանում է իր տանը հարազատների շրջանում անցկացնել, մեր երիտասարդները հրճուանքով շրջում էին մինչև ուշ գիշեր։ Անշուշտ նրանց ոգևորում էր գաղթականներին օգնելու ցանկութիւնը։

Ընկերութիւնը յայտնում է նաև իր շնորհակալութիւնը հասարակութեան, որ այս անգամ ևս չը խնայեց իր առատ նուիրատուութիւնը ամեն ինչից զրկված ու հալածված փախստականների օգտին։

Կովկ. Հայ Օր. Ընկ. Վարչութիւն

—

Թիֆլիս, 1 յունվարի

Ինձ Թւում է, Թէ վատ չէր լինի, եթէ փախստականների մէջ, երբ որ պատահեն ազատ կանայք, կամ մի կին 3—4 տարեկան երեխայի հետ, միայն այնպիսիները, որ մի բանի պէտք լինեն, կամ երիտասարդ միայնակ տղաներ 14—15 տարեկան, տրվէին որ տներում ծառայեն, կերակրվեն, հագնվեն և Թէ ռոճիկներ ստանան և ծառայեն, մինչև որ ապագան փոքր ինչ որոշ ծաւալ ստանայ դէպի լաւը։ Եթէ այդպիսիները պատահեն, ես մէկը վեր կառնեմ. աւելի լաւ է գործ տալ դրանց, քան ձրի կերակրել և սովորեցնել դրանց ձրիակերութեան։ Նոյնիսկ կարծում եմ, եթէ մի փոքր բաժանմունք կարելի լինէր ժամանակաւոր բաց անել, ուր տնային ծառայութիւն, կերակուր, լուացք, տուն մաքրել և վերջը մի բան սովորէին, վատ չէր լինի։

Այս պատերազմը դեռ երևի 6—8 ամիս կը շարունակվի առնուազն, իսկ եթէ ամեն անկիւնում դրանց համար պէտք է ձրի հաց պատրաստել և պահել, այդ ուր կը հասնի։

Լևոն Վարդանեան

ԿՈՉ ԻՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Սիրելի պարսկահայ եղբայր.

Ճակատագրի անողոք գրիչը քեզ ևս կընքեց փախստական անունով. դու նոյնպէս դարձար անտուն, անտէր ու աղքատ, զուրկ օրվայ հացից, հագուստից, կօշիկից, զուրկ սուրբ օջախից, հայրենի երկրից և ամենից՝ որ քո հայրերը, նախնիները հարիւրաւոր տարիների ընթացքում աշխատել, վաստակել, դիզել և ստեղծել էին։ Զուրկ ես այսօր քո գութանից, գոմէշից, հանդից, քո սիրելի դաշտերից, աղբիւրներից, վանքերից, գերեզմանատներից… զուրկ ես աշխարհիս ամեն տեսակ բարիքից, և այսօր ցնցոտիները, սովը, մահը և ցուրտն են քո բաժինը…

Ոչ Թէ նոր տարի, այլ սև տարի եկաւ քեզ համար, ոչ Թէ ուրախութիւն և բերկրանք, այլ լաց ու դժբաղդութիւն քեզ պատեց. 28 Թւի դառը բաժակը կրկին անգամ վիճակվեց քեզ խմելու մինչ վերջին կաթիլը. դու ստիպված, այո, հակառակ քո կամքի, ստիպված եղար Թողնել քո որրանը և ճաշակելով ձմրան ցուրտն ու քամին, բուքն ու բորանը, սովն ու մահը՝ անցար սարերից սար, դաշտերից դաշտ, ձիւնից ձիւն, որպէսզի խառնես քո արտասուքը Արաքսի արտասուքի հետ, կնքես մահկանացուդ Մասիս ձիւների մէջ։

Թողիր սիրուն Սալմաստը, Ուրմին, Խօյը, Թաւրիզը և Ղարադաղը. Թողիր քո տունը լի ամեն բարիքով. Թողիր որ որբախնամ ձեռքդ փոխարինես մուրացիկի. Թողիր որ քիւրդը վայելէ քո վաստակը, քանդէ քո օջախը, սրբապղծէ քո եկեղեցին, գերեզմանները… Թողիր և եկար, սիրտդ լի դարդով ու հառաչանքով, նրա խորքին ցնցված շամփուրով, բայց աչքդ ուղղած դէպ սուրբ հայրենիքդ…

Այո, մի հեռացնիր հայեացքդ այդտեղից. դու պէտք է նորից նոր վերադառնաս. դու չես կարող մոռանալ այն վայրը, որ քեզ ծնել, կերակրել է. դու չես հրաժարվի այն օջախից ու գերեզմանից, ուր նախնիներիդ յիշատակը կայ, դու չը պէտք է մուրացկան դառնաս, երբ ունես այնտեղ հող, տուն և սուրբ պարտականութիւն։

Պարսկահայ եղբայր,

Մօտ է արշալոյսը, մի վհատվիր, մի յուսահատվիր։ Քո յոյսը դարձեալ քո ծննդավայրն է, քեզ նորից նոր սնունդ կը տայ Սալմաստը, Ուրմին, Ղարադաղը, բայց ոչ հեռուն, ոչ անյայտը։ Մօտ է արշալոյսը. պատրաստ եղիր քո հայրենիքդ գնալու, այն հայրենիքը, որ քեզ ծնել, ուրախացրել էր, բայց ոչ երբէք դժբաղդացրել. հեռու Թող լինի քեզնից մշտական գաղթելու միտքը, վառ պահիր երեւակայութեանդ մէջ քո հայրենիքը, ծննդավայրը և նորից նոր այնտեղ գնալը։

Մի վհատվիր, եղբայր։ Մենք ետ պիտի գնանք և շուտով կերթանք. մօտ է, շատ մօտ արշալոյսը։ Մենք կանցնենք այս անգամ Երասխը ժպիտով և ուրախօրէն նորից կը գրկենք այն սուրբ հողը, ուր կան մեր տները, մեր դաշտերը, մեր վանքերը, գերեզմանները, մեր աւերակները, մեր սիրելի պարսկահայքը, վաթանը…

Իրաւաբան Ս. Աւագեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Գուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծակալհատ.:
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—142

Ատամնաբուժարան
Հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլօվսկի պր. № 7
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլօմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ռ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամնատեխնիկական աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—66

Լոյս տեսաւ
Պետրօգրադում Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ մի նոր ռուս-աշխատութիւնը
Б. ИШХАНЯНЪ
«Нѣмецкій профессоръ о германскомъ шовинизмѣ»
(Факты и разоблаченія)
Գինն է 15 կոպէկ։
Դիմել կենտրոնական պահեստին՝ Петроградъ, Книжный магазинъ М. В. Попова, Невскій № 66. իսկ Կովկասում՝ «Գուտտենբերգ» (Թիֆլիս) և «Сотрудникъ» (Բագւում) գրավաճառներին։
2. 10—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 7—9. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնովսկայա, № 16.
(Հ. ու. կ.) 1018. 100—18

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ իրաւունքներով
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Խնդիրների ընդունելութիւն։ Պարապմունքները յունվարի 7-ից։
Լոյս է տեսել «Հաշւապահութիւն» գրքի նաև տեսական մասը։ Գինը 50 կ.: I Տումանօվսկայա փող. № 13, սեփ. տ.։
1015. 10—5

Առևտր. և Արդիւնաբեր. Մինիստրութիւն
Թիֆլիսի № 24 Ստուգիչ պալատը ՉԱՓՍԵՐԻ և ԿՇԻՌՆԵՐԻ
Միխայլօվսկի պրօսպէկտ № 117.
Հաղորդում է, որ համաձայն Առևտր. կանոն. 748-րդ և 758-րդ յօդ.՝ բոլոր չափսերը և կշիռները պէտք է ունենան իրանց վրա ստուգիչ պալատների կնիքը. այդ կնիքները ոյժ ունեն երեք տարվայ ժամանակաընթացքում, որի համար խնդրւում է բոլոր առևտրական և առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններին, դեղատների պահեստներին, գործարանների, վագոնների, գրասենեակների, բանկերի և այլն մասնաւոր, ընդհանրական և տէրութեան հիմնարկութիւններին ներկայացնել բոլոր կշիռները, կշռաքարերը, սաժէնները, արշինները, հեղուկների չափերը, գինու, սպիրտի, օղու, գարեջրի և կաթի, ջրի տակառները, գարեջրի, օղու և այլն. այսինքն այն բոլոր տարրկանները, որոնցով չափվում և կշռվում են, որոնք չունեն կնիք և եթէ կլէյմէն էլ բացի 1912 թ. սկզբնական և կրկնողական կնքելու համար։ Հակառակ դէպքում կշիռները և չափերը կը վերցվեն վերաքննվելու ժամանակ տէրերից և վերջինները կենթարկվեն քրէական պատասխանատուութեան համաձայն պատժագրքի 1176-րդ յօդուածի. կշիռները և չափերը ներկայացվում են ուղիղներ, հակառակ դէպքում չեն կնքվում, իսկ կնքավճարը չէ վերադարձվում։
Ժամանակ Թիֆլիսի համար 1915 Թ.
Յունվար ամսում I, II, III և IV քաղաքամասերում։
Փետրվար և մարտ ամիսներում V, VI, VII և VIII քաղաքամասերում։
Մարտ ամսում IX, X, XI և XII քաղաքամասերում։
Ներքևում յիշված տեղը կուղարկվեն վերստուգիչները։
Ապրիլ ամսում Անակլիա, Գուդաւա, Գալի, Օչեմչիրի, Նոր Սենակի, Հին Սենակի, Նոզգալեվի և Բանզա։ Մայիս ամսում Սուխում, Գուդաութ, Արդվին, Արդանուչ, Բօրչխա և Մարադիդի։ Յունիս ամսում Քութայիսի, Լանչխութ, Սուպսա և Ջաւմաթ, Օնի։ Յուլիս ամսում Վօրօնցովկա, Ջալալ-օղլի և Ալեքսանդրօպոլ, Թիօնէթի։ Օգոստոս ամսում Ախալցխա, Ախալքալաք, Նոր-Մաչկան, Ցարսկիէ-Կոլոդցի և Լագոդեխ։ Սեպտեմբեր ամսում Բաթում, Վելիսցիխէ և Սիղնախ։
Կառավարիչ՝ Ա. ՌԷԶՎԵԱԿՕՎ
Յունվար 1915 Թ. 9. 1—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
„Настольный Кавказскій календарь"
на 1915-й годъ.
Հրատարակութիւն Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի փոխարքայի դիւանատան։
Յաւելուածներով՝
1) Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի գալուստը Կովկաս 1914 Թ. (պատկերներով)։
2) Կովկասի քարտէզը 40 վերստ մասշտաբով (գոյներով), տպված կովկասեան զինուորական շրջանի շտաբի վիմագրատանը։
Գինն է՝ առանց ճանապարհածախսի . . . . 3 րուբլի
» ճանապարհածախսով . . . . 3 րուբլի 50 կոպ.
10. 2—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.